

Ա տարի. # 2, փետրուար 20, 1991
ՊԱՇՏՆԱԹԵՐԹ ՈՍՍԿՎԱՐ ԱԶՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԶԱՅՆ ՄԸ ԳՆԶԵՑ ԱՐՅԱԽԵՆ

Ինչպես 125 տարի առաջ՝ Էրզրումի հայոց լեռներն, 3 տարի առաջ, ճիշտ այսօր, ձայն մը հնչեց Արցախէն, թունդ-թունդ հանելով սրտերը բովանդակ հայութեան: Մակընթացութիւն էր, հեղեղ էր, լաւայ՝ որ ծայրքեց, մէկ անգամ եւս միաւորելով ազգը իր արդար Դատի շուրջ, ի գորակցութիւն Լեռնային Դարասրահի Մարզխորհրդի 20 փետրվարի 1988 թ.-ի ազգացուցնող որոշման:

Իհարկէ, առաջին անգամ չէր, որ դուռն էր այդ պահանջը: Դեռ 1956 թ.-ին Ռամկավար ազատական կուսակցութեան պատուիրակութիւնը այն ներկայացնում էր Խորհրդային Դեռ 1960-ականներին «Չարթոնի» խմբագիր Գ. Ահարոնեանին իր «Մեծ երազի ճամփուն վրայ» գրքում գրում էր. «Թուրքիան մեր հողերուն վրայ նստած է թշնամարար, Պարսկաստանն ու Վրաստանը՝ քարեկամարար, իսկ Ադրբեջանը... եղբայրարար»: Մինչ Ս. Միմոնեանին իր «Սփիւռք» թերթում եւ ուրիշներ մեր ազգային մամուլում, անընդհատ հնչեցնում էին պահանջատիրութեան ձայնը Արցախի: Եւ ոչ միայն սփիւռքում, այլ նաեւ Երեւանում, նոյնիսկ Ստեփանակերտում, քիթու ուժով խեղդուելով նոյնհետայն: Սակայն առաջին անգամն էր, որ 1988 թ. փետրվարին այն ներկայացում էր պաշտոնապես, իբրև ժողովրդի ներկայացուցիչների միահամուռ որոշում, իբրև...

...Պերնատրոյկայի ու Գլասնոստի թարմաշունչ քամին էր, որ ոգեւորել էր մեր միամիտ սրտերը, մեզ, որ կարծում էինք, թէ արդարութիւնը, ազգային ինքնորոշման իրաւունքը դեռեւս նշանակութիւն ունեն քաղաքական կեանքում ու մանաւանդ խորհրդային «ճոր» ղեկավարութեան համար:

Սակայն շուտով, հազիւ մէկ շաբաթ անց, սումգայիթի սպանդներով փորձ արուեց հունից հանելու մեր ազգի շարժումը, խեղաթիւրելու այն ազգայնամոլութեան ու ծայրայեղականութեան պիտակներով, խարանելու ազգամիջեան կնճռի կնիքով:

Ու չկարողացանք արագօրէն ճեղքել այդ դաւադիր օղակը: Բանգի միամիտ էինք, անփորձ: Զուգեմք այն գլխաւորը՝ ազգային պետականութիւնը, որն օգտուէր ստեղծուած յարմար պահներին, եւ որն այդ պահին սկսած կնքել էր արդէն իր մահկանացուն...

Եւ այժմ, տառապանքի ու պայքարի 3 տարիներից յետոյ, Արցախի վերամիացման մեր պահանջը վերածուել է Արցախը պահպանելու՝ անհրաժեշտութեան: Յոգնածութեան նշաններ են ցոյց տալիս արդէն ոմանք, եւ ինքնագործունէութիւնն է թագաւորում նոյնիքն Արցախում:

Պէտք է զգաստանալ: Պէտք է գերարել ու համակարգել մեր բոլոր ուժերը, բոլոր տեղերում: Պէտք է բոլորուել մեր ազգային պետականութեան շուրջ, որ, հակառակ բոլոր երեւոյթներին եւ պնդումներին, շարունակում է տարբեր մակարդակների վրայ հետապնդել հարցը, տնտեսական եւ այլ կարգի օգնութիւն կազմակերպել դէպի Արցախ: Առաջին հերթին պէտք է վերականգնել մեր հաւատը Արցախի վերամիացման հանդէպ, ապա՝ ստեղծել ազգային համաձայն կառուց հենց տեղում, եւ այնուհետեւ վերականգնել արցախեցու ինքնապաշտպանութեան գործը, նրա տնտեսական կեանքը, կենսագործունէութիւնը, անդուլ աշխատեցնելով նաեւ մեր դիւանագիտական ու քարոզչական մեքենան:

Վերամիացման պահը պիտի գայ անպայման: Չայնը դեռ կը հնչէ Արցախէն...

«Պահանջում են Գորբաչովի հրաժարականը», այսպես վերջացրեց իր ելույթը կենտրոնական հեռուստատեսութեանը ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի նախագահ Բորիս Ելցինը: Նրա կարծիքով դեկլարութիւնը պետք է անցնի հանրապետութիւնների կազմված ֆեդերացիայի խորհրդին: 40 րոպե տեսողութեամբ հեռուստահարցազրույցի ընթացքում Ռուսաստանի խորհրդարանի նախագահը, պատասխանելով լրագրող Ս. Լոմաչիցիի եւ ՌԽՖՍՀ-ի հեռուստաընկերության պրեզիդենտ Օ. Պոպովի հարցերին, նշեց, որ 1987 թվականից սկսած, Գորբաչովը

վարում է այնպիսի քաղաքականություն, որը երկիրը տանում է դեպի փակուղի: Նա անընդհատ խոստումներ է տալիս, բայց չգիտի դրանց կատարման ձևերը: Գորբաչովը պրեզիդենտական իշխանության անվան տակ հաստատել է ռազմական դիկտատուրա: Դա ցույց է տալիս նրա հակաժողովրդականությունը: Ինչ վերաբերում է Ելցինին, ապա ինքը կատարել է իր ընտրությունը եւ կոչ է անում ռուսաստանցիներին՝ աջակցել իրեն:

Բ. Ելցինը նշեց, որ հակառակ սուտ հայտարարությունների, ինքը երբեք քանակին դեմ չի եղել: Ուղղակի չի ընդունել ուժի միջոցով ազգամիջեան հարաբերություններն ու կոնֆլիկտները կարգավորելու քաղաքականությունը:

Նախագահը խոսեց նաեւ տրամադրութեամբ ՌԽՖՍՀ նոր կառավարության եւ իր թույլ տված սխալների մասին, այդ թվում, առաջին հավատը Գորբաչովի նկատմամբ, թե իբր նա կօգնի իրագործելու «500 օր» ծրագիրը, բայց փոխարենը այն ջլատվեց եւ թաղվեց:

Այժմ «500 օրվա» սկզբունքները մնացել են, իսկ ծրագիրը չկա: Երկրորդ՝ հացահատիկի գնի բարձրացումը, որը հանգեցրեց

նաեւ մի գնի բարձրացմանը: Դա կենտրոնը հմտորեն օգտագործեց եւ տարածեց բոլոր հանրապետություններում:

«Նախագահը ընտրվելուց հետո, առաջ Ելցինը, եւս մի քանի անգամ փորձեց ընդառաջ գնալ պրեզիդենտին եւ գտնել մերձեցման ուղիներ: Սակայն տարադրույն: Կենտրոնը ամեն կերպ խանգարում է մեր գործունէութեանը: Գնորի կտրուկ բարձրացմամբ նա ժխտական վերաբերմունք է սերմանում ժողովրդի մեջ. միչդեռ «500 օր» ծրագրով նախատեսվում էր, որ 150 կարետր սննդամթերքների եւ ապրանքների գները պետք է ստոնցվեն, եւ հետագայում՝ շուկայական հարաբերությունների արձատարումից հետո, աստիճանաբար մտցվեն շուկա»:

Բ. Ելցինը նշեց նաեւ, որ կապեցել է ՌԽՖՍՀ-ի, Ռկրանիայի, Բելոռուսիայի, Ռեզբկաստանի եւ Ղազախստանի դեկլարների հանդիպում, որի ընթացքում քաղաքակցել է նախարարների կաբինետի հարցը:

Ռուսաստանի նախագահը հույս հայտնեց, որ մարտի 17-ի հանրաքվեից առաջ իրեն խոսք կտրվի կենտրոնական հեռուստատեսությամբ եւ ինքը կկարողանա արտահայտել իր տեսակետները միութեանական հանրաքվեի վերաբերյալ:

ՅԱՍԱՐԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ՝ ՅԱՆԿԱՑԱԾ ՊԱՅԻ ԻՐԱԹԻ ՊԱՍՏԱԽԱՆԸ ԳՈՐԲԱՉՈՎԻՆ ԿԿԱՆՉԵՎԻ ԱՅՍՈՐ ԲՈՒՇ. «ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՅՄԱՆԵՐԸ ԽԻՍ ԱՆԲԱՎԱՐՈՒ ԵՆ»



Դաշնակից ուժերն ավարտել են արդեն նախապատրաստական աշխատանքները եւ ցանկացած պահի կարող են ձեռնարկել իրաքան ուժերի վրա ցամաքային հարձակում, հավաստիացնում են արեւմտյան զինվորական աղբյուրները, ավելացնելով, որ արդեն 55 հազար անցած օդաչուներով իրենց հաջողվել է շարքից դուրս հանել իրաքան ուժերի ավելի քան 40 տոկոսը, եւ թե Մադդամ Հուսեյնի համար այնքա անկարելի է ջախջախումից խուսափել:

Ըստ մանագետների, այդ հարձակումն սկզբնական շրջանում կլինի առավելաբար ծովից կատարված ցամաքահատումների միջոցով, միաժամանակ օդային ու ցամաքային ուժերով մտնելով զուգակցված, առիթ տալու համար

ղեկավարներին՝ քիկունցից ճանդելու իրաքան գործերի դիմադրողականությունը: Անցնող 3 օրերին դաշնակից ուժերն աշխուժացրել կեն անբողջ ռազմաճակատը Բուվեթի սահմանների երկայնքին, այնտեղ կենտրոնացնելով մեծ քանակությամբ ռազմական տեխնիկա եւ թղթամթերքներ, մինչ նրանց օդուժը շարունակվում էր ուժեղանալ իրաքան գործախմբավորումներն ու քաղաքները: Երեկ գիշեր մայրաքաղաք Բաղդադ անցել է պատերազմի ամենամաքր օրերից մեկը, ըստ այստեղից Ամման անցած ուղեւորների, մինչ իրաքան Խորհրդային քաղաքի հատակորեն զգացել են հարեւան իրաքան շրջանների վրա ընկնող ռումբերի ցնցումները:

Քիկունցից ճանդելու իրաքան գործերի դիմադրողականությունը:

Անցնող 3 օրերին դաշնակից ուժերն աշխուժացրել կեն անբողջ ռազմաճակատը Բուվեթի սահմանների երկայնքին, այնտեղ կենտրոնացնելով մեծ քանակությամբ ռազմական տեխնիկա եւ թղթամթերքներ, մինչ նրանց օդուժը շարունակվում էր ուժեղանալ իրաքան գործախմբավորումներն ու քաղաքները: Երեկ գիշեր մայրաքաղաք Բաղդադ անցել է պատերազմի ամենամաքր օրերից մեկը, ըստ այստեղից Ամման անցած ուղեւորների, մինչ իրաքան Խորհրդային քաղաքի հատակորեն զգացել են հարեւան իրաքան շրջանների վրա ընկնող ռումբերի ցնցումները:

ՀՅՈՒՊԱՏՈՍԱՐԱՆԵՐԻ ԲԱԶՎՈՒՄ ԵՒ ՏՐԱՊԻԶՈՒՄ

ՄՈՍԿՎԱ, 19 փետրվար 1991
Մեր սեփական թղթակից
ՀԱՎՈՐ ԱՍՍՏՐՅԱՆ

«Պոստֆակտում» գործակալության թղթակից Վ. Բելյանսկին հաղորդում է, որ Բաքվում կայացել է ԽՍՀՄ-ում Թուրքիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Վոլոյան Վուրախի եւ Ադրբեջանի պրեզիդենտ Ալազ Մուսախիյովի հանդիպումը, որից հետո հայտնի է դարձել, որ կողմերը ծրագրում են Բաքվում բացել Թուրքիայի հանրապետության Գլխավոր հյուպատոսարան: Հայտնի է դարձել նաեւ, որ դիվանագիտական ներկայացուցչության բացմանը ներկա կլինի Թուրքիայի պրեզիդենտ

Թուրքուտ Օզալը: Այնուհետեւ նախատեսվում է Թուրքիայի Տրապիզոն քաղաքում բացել Ադրբեջանի հանրապետության հյուպատոսարան:

Դեսպան Վուրախը հայտարարել է, թե Թուրքիան կարող է օգնել քարեկամ Ադրբեջանին՝ դառնալու միջազգային տնտեսական համագործակցության լիիրավ անդամ: Դրանից զատ, ամենատարբեր ասպարեզներում մեծ տեղ կտրվի երկկողմանի կապերի ընդլայնմանը:

ԳՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՄ ԼԿԱԶՄԱԳՈՒՅՆ 60 ՏՈՒՆՈՒԿ

ՄՈՍԿՎԱ 18-19 Փետրվար. Խորհրդային ընկերակառուցությունից մինչեւ տնտեսական ազատ շուկա անցումն ըստ երեւոյթին շատ է երկար, եւ պրեզիդենտ Գորբաչովի շունչն այնքա չի հերթում

հասնելու դրան: Փոխարենը նա առաջարկում է «զիջումնաժող» եւ հերթական նոր տարբերակ...

Իսկ ի՞նչ է դա նշանակում: Գնորի բարձրացում՝ նվազագույնը 60 եւ առավելագույնը 150 տոկոսով: Ու որպեսզի նման համաժողովրդական որոշման պատասխանատվությունը միայն իր վրա չընկնի, պրեզիդենտն այդ որոշման նախագիծը դրեն Գերագույն խորհրդի եւ ֆեդերացիայի խորհրդի հաստատման, մինչդեռ կարող էր մի նոր ուկազ հրապարակել:

Այսպիսով, համաձայն այդ նախագծի, որի մանրամասնություններն էին լրամշակվում երեկ, լայն սպառման ապրանքների 30 տոկոսից ավելին ներթափա են պայմանագրային գների, այսինքն 60-150 տոկոսով հավելումների: Ու թեեւ դրանց ցուցակում չեն լինելու միսը, կաթը, ձու, շաքարը, աղն ու մամուկան սննդի ղեղերը, այսուհանդերձ, վարչապետ

Վալենտին Պավլովի մի հայտարարության համաձայն, «դրանց գինն էլ մոտիկ պետք է լինի իրական արժեքներին»:

Հավելումներից զերծ են մնալու հագուստեղենն ու տնային առարկաները, որոնք արդեն կան չկան, կամ էլ արդեն կրել են զգալի հավելումներ:

Փոխարենը, նախագիծը հաճաքարում է աշխատավարձի եւ այլ ձեւերով հատուցումների կատարել մինչեւ 85 տոկոսի չափով, դրանց մեջ չընդգծելով սակայն դեղորայքը, վառելանյութը եւ օդին:

Բացի այդ, ըստ արեւմտյան աղբյուրների, կենտրոնը հոգացել է նաեւ նախապատրաստական մի կարետր քաչ՝ քանակային միավորումներն արդեն տեղավորվել են Խ. Միտրյան 400 տարբեր վաչքերում, տեղական միլիցիայի հետ «կարգուկանոն հսկելու», համաձայն նախագիտը վարձավ պրեզիդենտական հայտնի ուկազի:

Մոտավորապես: Բանի որ դեռեւս չի հրապարակվել այն նամակի բովանդակությունը, որը երկուշաբթի օրը Մոսկվայում հանձնվեց Խրաքի արտագործ նախարար Թարեք Ազիզին: Սա նույն օրն իսկ Թեմրանի վրայով անցնելով Իրաք, այն հանձնեց նախագահ Հուսեյնին: Թարեք Ազիզը այսօր մի անգամ եւս վերադառնալով Մոսկվա, պրեզիդենտ Գորբաչովին կհանձնի Մադդամի պատասխանը այդ պայմաններին, որոնք կրննի կողմից արդեն երեկ ծանուցվել էին երապական երկրների կետերին եւ պրեզիդենտ Ռուչին:

Այս վերջինը, սակայն, չապստելով քանակությունների արդյունքներին, երեկ «Խիստ անքավար» որակեց կրննի պայմանները, իր գործերին հրահանգեց օղակ սեղմել իրաքանների շուրջ: Պատերազմի շարունակում, թե՛ քանակություններ, կրննա առաջիկա օրերին, եթե ոչ՝ առաջիկա ժամերին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԼՍՍԱՆԸՐՋԱՆՈՒՄ

Փետրվարի 18-ին ճիստի մասնակիցները մեկ րոպե լուսաբանության հարգեցին 1921 թ. փետրվարյան ապստամբության զոհերի հիշատակը:

Այնուհետև խորհրդարանը քվեարկությամբ որոշեց «Հանրապետի մասին» Հայաստանի հանրապետության օրենքը քննարկել առաջին նստաշրջանում:

Խորհրդարանը շարունակեց քննարկել «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» Հայաստանի հանրապետության օրենքի նախագիծը:

Մեծ թվով առաջարկություններ եղան նախագծի այն կետի վերաբերյալ (երրորդ հոդվածի վեցերորդ կետ), ըստ որի քաղաքում է օգնություն ստանալը արտասահմանից, իշխանության մարմիններից, հիմնարկ-ձեռնարկություններից, կազմակերպություններից:

Փետրվարի 19-ին խորհրդարանը շարունակեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքի քննարկումը: Եվ դարձյալ վեցերորդ կետի վերաբերյալ չափազանց սուր վեճեր ծավալվեցին:

Քննարկվեցին նաև մի շարք այլ հարցեր:

ՀՀ ԳԽ լրատվական կենտրոն - Ազգ

ԿԵՐՈՎԱԿԱՆ

«ՍՈՒՐԲ ԼԱՐԵԿԸ

ՄՊՍՍՈՒՄ

1988 թվականի դեկտեմբերյան ամիսից անմիջապես հետո քրիտանահայ համայնքում կազմավորվեց «Հայաստանի օգնություն» կոմիտեն: Հայաշատ երկու քաղաքներում՝ Լոնդոնում և Մանչեստրում քաղցկեցին հանգանակության ավանդներ, որոնց մասնակցեցին ոչ միայն տեղի հայերը, այլև շատ անգլիացիներ: Հավաքված մոտ 3 մլն. անգլիական ֆունտ ստեռլինգով որոշվեց Կիրովականում կառուցել երկհարկանի 60 տեղանոց «Սուրբ Նարեկ» մանկական հիվանդանոցը: Նախագծի հեղինակ, լոնդոնահայ ճարտարապետ Վահե Գուլվանեսյանին հանդիպեցինք Լոնդոնի իր անձնական հիմնարկությունում: Այստեղ էլ ծանոթացանք ապագա հիվանդանոցի նախագծին:

Մանկական բուժարանը կկառուցվի անգլիական բարձր կարգի հիվանդանոցների մակարդակով: Երկհարկանի մասնաշենքը լինելու է երկուշարժակալուն, օգտագործվելու են բնօրինակ ամրասյուր, քաղալտ և տուֆ: Ներքին կահավորման համար կպահանջվի ես մեկ միլիոն ֆունտ ստեռլինգ: Ուստի սկսվել է նոր հանգանակություն: Կահավորման աշխատանքների մասնակցելու է նաև ավստրիական մի ընկերություն, որի հետ արդեն կնքվել են համապատասխան պայմանագրեր:

Հիվանդանոցում կտեղադրվեն ժամանակակից բուժարքավորումներ: Սկզբնական շրջանում կհրավիրվեն արտասահմանյան մասնագետներ, որպեսզի տեղի բժիշկներին սովորեցնեն նոր սարքավորումներից օգտվելու կանոնները:

Հիվանդանոցի առաջին հարկը կզբաղեցնեն ամբուլատոր բուժումների, ախտորոշման, վերականգնողական քաժինները, վիրահատարանները, դեղատունը, սպասարկման-տեղեկատու կենտրոնը և այլ հարմարություններ: Երկրորդ հարկում հիմնականում կլինեն հիվանդասենյակներ, ճաշասենյակներ, խաղասենյակներ, սպասարկող և բուժանձնակազմի հարկաբաժիններ: Երկու հարկերում էլ կլինեն հարմարավետ սպասարաններ: Կգործեն նաև վերելակներ: Հի-

վանդանոցի հիմնական մասնաշենքից հեռու կկառուցվի խոհանոց և կաթսայատուն: Այնպես որ կլուծվի նաև պատրաստի սննդով մատակարարելու հարցը:

Հիվանդանոցային ողջ համալիրը կզբաղեցնի 2350 քմ մակերես և պայմանագրի համաձայն շահագործման կհանձնվի 1991 թվականի օգոստոսին: Վերադասնալով Հայաստան, շտապեցի ծանոթանալ ապագա հիվանդանոցի շինարարական աշխատանքներին: Սակայն, ինչպես ասում են, սալը տեղից դանդաղ է շարժվում: Մինչդեռ ըստ նախնական պայմանավորվածության կիրովականի շինարարները արդեն պետք է ավարտեին շենքի հիմքի շինարարությունը, որից հետո նախագծի հեղինակներն իրենց ուժերով պետք է շարունակեին երկու հարկերի կառուցումը:

Հուսանք, որ համատեղ ջանքերի շնորհիվ, կառույցը շահագործման կհանձնվի ժամանակին:

Հ. ԱՍՏՐՅԱՆ

ԿԱՊԱՆ

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

ՃԳՆԱԺԱՄԻՅ ԳՈՒՐՍ ԳԱՆՈՒ ՈՒՂԻՆԵՐ

Հաղորդում է մեր սեփ. քղթ.

ԱՆԱՆԻՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ

Ինչպես ողջ հանրապետությունը, Կապանի շրջանը նույնպես ծանր ենթարկվել է կազմալուծման մեջ է: Որո՞նք են ճգնաժամից դուրս գալու ուղիները:

Ըստ Ջանգեզուրի էլեկտրական ցանցերի ձեռնարկության տնօրեն Վ. Կարախանյանի, Երևանի «Հիդրոէներգետիկ» ինստիտուտը ձեռնամուխ է եղել Ողջի գետի վրա գործող երկու հիդրոէլեկտրակայանների (հզորությունը՝ 11 մեգավատ) վերասարքավորմանը, ենթագիայի ակնկալվող շահույթը՝ 20 մեգավատ:

Պղնձամոլիբդենային կոմբինատի կաթսայատան հիմքի վրա պիտի կառուցվի 6 մեգավատ հզորությամբ ջերմակայան:

Պայմանագիր է կնքված Մոսկվայի էներգիայի էկոլոգիայի մաջուր, աղբյուրների ինստիտուտի հետ, ըստ որի արդեն այս տարի քանու ենթագիայով աշխատող երկու փորձնական կայաններ պիտի կառուցվեն (հզորությունը՝ 140 կիլովատ):

Խճաղարկության կողմից, Ավերորդ չենք համարում նշել, որ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում արդեն մի քանի տարի է, որ հաջողությամբ գործում են քանու ենթագիայի օգտագործման երկու լաբորատորիա, որոնք արդեն միջազգային ասպարեզ են դարձնել:

ՀԱՅ-ԱՆԳԼԻԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Մի քանի օր առաջ Անգլիայից վերադարձավ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Ֆ. Պետրոսյանը: Նա պայմանագիր է կնքել «Մարք-Ինչ» ընկերության հետ: Ընկերությունը նորագույն սարքավորումներ է տրամադրելու Ջանգեզուրի կոմբինատին պղնձի ավելի որակյալ խտանյալ արտադրելու համար, ինչը կարտահանվի Անգլիա: Պետք է նշել, որ նախկինում միջին կոմբինատի փակվելը, Անգլիա պղնձ էր առաքում Ալավերդու պղնձամոլիբդենային կոմբինատը, որը Հայաստանում միակ պղնձ արտադրող ձեռնարկությունն էր:

ՊԻԼԵՋԱԼ

ԵՆՈ ՈՒՔ ԲՆԱԿԱՐԱՆ

ԱՐԵՏՅԱԼՆԵՐԻՆ

Մեր սեփ. քղթ.

ԱՐՏԱԿ ԲՈՋԻՎՅԱՆ

Օրերս շահագործման հանձնվեցին Գոշ գյուղի երկուշարժից

տուժածների համար կառուցված երկու տնակ՝ չորս սենյականոց ութ բնակարանով, կից կառուցված են ավտոտնակ, անասնագոմ, հատկացված է հողամաս:

Շինարարական աշխատանքները իրականացրել է «Գիլշանչին» տրեստին կից «Բիբի» կոոպերատիվը, որի նախագահն է Մարգիտ Պողոսյանը: Շինանյութերի խիստ պակասության պայմաններում գտնվեց միակ ճիշտ ելքը, այն է՝ օգտագործել տեղական քաղալտը: Գյուղերում ապրելու հարմար պայմանների ստեղծումը հույս է ներշնչում, որ գյուղացիներն ավելի ամուր կկապվեն գյուղին:

ԻՋԵՒԱՆ - ԴԵՈՒՎՈՐ

ԱՐԵՒԵԼՔ

Կարծր դրամ վաստակելու լավ հնարավորություն է հայաչաթել Իջևանի փայտամշակման կոմբինատի կուլեկտիվը, որը պայմանագիր է կնքել «Վոստոկնեբել» ձեռնարկության հետ: Արտասահմանյան փայտանյութը պիտի մշակվի Իջևանում և ուղարկվի Հեռավոր Արևելքի երկրների կահույքագործներին: Կահույքի վաճառքից առաջացած շահույթի մի մասը կհանձնվի Իջևանի կոմբինատին:

ԵՐԵՒԱՆ

ԼԿԱՐՆԵՐԻ ԿՈՐՈՒՄՍ ԿԱՍ ԵՆՍ ՄԵԿ ՓԼՈՒՋՈՒՄ

Փետրվարի 16-ի լույս 17-ի գիշերը Թամանյան փողոցի վրա գտնվող հինավուրց ԼԿԱՐՆԵՐԻ ԵՆՍ ՄԵԿ ՓԼՈՒՋՈՒՄ 21 տան երկրորդ հարկի հատակը փլուզվեց, փլուզվեցին տակ թողնելով երիտասարդ մկարիչների վրձինն պատկանող մոտ 250 նկարներ:

Վթարային այդ շենքում ժամանակավոր ապաստան էր գտել Երիտասարդ մկարիչների կենտրոնը: Վերջերս այնտեղ կազմակերպված ցուցահանդեսի հովանավորողն էր Թեքեյան մշակութային միությունը:

1989 թ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՅ ՄՊԱՆՎԵԼ ԵՆ ԱՐՅԱՒՈՒՄ

- Տոնոյան Արթուր Սուրիկի - ՄՆՎ. 1959 թ. Լեհինգրադում: Սպանվել է Մարտակերտ-Ստեփանակերտ ճանապարհին 1989 թ. հուլիսի 12-ին: Գնդակոծումից կտրվել է գանգոսկրը:
- Հովսեփյան Լյովա Միքայելի - ՄՆՎ. 1939 թ. Ասկերանի շրջանի Շոշ գյուղում: Սպանվել է 1989-ի հուլիսի 14-ին:
- Խրայեյան Ռուբեն Հրանտի - ՄՆՎ. 1958 թ. Ասկերանի շրջանի Բաղարա գյուղում: Սպանված 1989-ի օգոստոսի 16-ին հրազենով խոցվելով կրծքի շրջանում:
- Հակոբյան Սպարտակ Առաքելի - ՄՆՎ. 1950 թ. Ստեփանակերտ քաղաքում: Սպանվել է 1989-ի հոկտեմբերի 12-ին Ստեփանակերտի փողոցներից մեկում խորհրդային զինվորների կողմից: Հրազենից խոցվել են կուրծքը և փորը:
- Առուստամյան Արտո Աստվածատուրի - ՄՆՎ. 1964 թ. Մարտակերտի շրջանի Չլորան գյուղում: Մահացել է 1989-ի հոկտեմբերի 13-ին գլխի ստացած հրազենի վերքերից:
- Հայրապետյան Յաշա Մարգի - ՄՆՎ. 1927 թ. Մարտակերտի վանք գյուղում: Սպանվել է 1989 թ. հոկտեմբերին: Գիակը հայտնաբերվել է հոկտեմբերի 9-ին քաղաքի գանգոլ և ուղեղի տրավմայով:
- Հակոբյան Արմեն Վլադիմիրի (հայտնի քանդակագործ) - ՄՆՎ. 1941 թ. Ստեփանակերտ քաղաքում: Սպանվել է 1990 թ. հունվարի 2-ին Ստեփանակերտ քաղաքում խորհրդային զորքի կռակցից խոցվելով փորին տրավմայով ավտոմատի կրակահերթից:
- Գանդիսյան Յաշա Դանիելի - ՄՆՎ. 1953 թ. Հաղորայի շրջա-

նի Մեծ Թաղեր գյուղում: Գիակը գտել են անտառում 1990 թ. մարտի 14-ին: Սպանված է հրազենից:

9. Ալրոտյան Արմեն Ռուբենի - ՄՆՎ. 1978 թ. Մարտակերտի շրջանի Չալու գյուղում: Սպանվել է պատահաբար հրազենի վերքեր ստանալով կրծքավանդակին:

10. Մախմուրյան Կարո Վլոդյայի - ՄՆՎ. Ասկերանի շրջանի Բալուջա գյուղում 1968թ: Սպանվել է 1990 թ. մայիսի 25-ին հրազենից վերքեր ստանալով վզին, կրծքին, փորին և կոնքին:

11. Դավթյան Գագիկ Մուսայի - ՄՆՎ. 1962 թ. Ստեփանակերտում: Սպանվել է 1990 թ. մայիսի 24-ին՝ ավտոմատի կրակահերթից՝ վիրավորվելով գլխից և ձախ ուսից, ուղեքերից և մարմնի այլ մասերից:

12. Գալստյան Ռուբիկ Ռազմիկի - ՄՆՎ. Մարտակերտի շրջանի Դամիրու գյուղում: Գիակը գտնվել է անտառում՝ հրազենի վերքեր գլխի վրա: Չի քայքայվում նաև հայի կողմից սպանված լինելը:

13. Բաղդասարյան Նիկոլայ Ավագի - ՄՆՎ. 1928 թ. Ստեփանակերտում: Սպանվել է 1990-ի հոկտեմբերի 4-ին հրազենով: Վերքերը եղել են կոնքի մասում:

14. Վերոյան Միքայել Խորենի - ՄՆՎ. 1968 թ. Ասկերանի շրջանի Նախիջևանիկ գյուղում: Սպանվել է 1990 թ. հոկտեմբերի 20-ին: Հրազենի կրակոցներից փշրվել է գանգոսկրը և ծանր վնասվել ուղեղը:

15. Հայրապետյան Վլադիմիր Միքայելի - ՄՆՎ. 1934 թ. Լեհինգրադում: Սպանվել է 1990 թ. հոկտեմբերի 23-ին՝ վիրավորվելով հրազենից Մարտակերտի շրջանում:

ԲԵՐԿԱՍՈՐ, փետրվար 18

Զինվորականները մտել են Բերդաձորի ձեռնարկությունները ստուգման պատրվակով, քարուքարել արել, ավերել դղանք: 7 հոգու տարել են իրենց հետ Եուշրի ուղղությամբ:

ԱՍԿԵՐԱՆ, փետրվար 19

Արցախի Ասկերանի շրջանի Խոջալու գյուղի մոտերում պաշտել է քնճատար մեքենա: Դեպքի մասնախնամները դեռ պարզված չեն:

Թերթի նախորդ համարում տեղեկացրել էինք Գորքաչովին և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ցրթերող հավաքին ուղարկված Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի հեռագրի մասին: Տպագրում ենք բուն տեքստը քաղաքացիական պայմանագրից:

ԿՈՉ ԿԱՆԲԵՐԱՅՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԻՆ

Այսօր ձեզ, ենք դիմում՝ խնդրելու համար ձեր բաղադրական ճանաչողական անսպասելի մի ճանաչման դեմ հանդիման, որ խորապես ցնցում է մեր Եկեղեցին և մեր ժողովուրդը: Անցնող հունվար 21-ին Արցախյան կառավարությունը որոշել է փակել վիրավորվող Լեռնային Կարաբաղի երկու հայկական վանքեր՝ Ամարասի և Գանձասարի վանքերը:

Ամարասի վանքը չորրորդ դարի կառույց է: Այն ամփոփում է Գրիգոր Լուսավորչի սուրբ մատուցները: Լինելով կրոնական կյանքի կենտրոն այն անընդմեջ սրբավայր է եղել մինչ մեր օրերը:

Գանձասարի վանքը տասներեքերորդ դարի հայկական եկեղեցիների ռոնով կառուցված կործանված մի շինություն է: Այն դարերի վեր Արցախի թեմի առաջնորդների ցտավայրն է, ուներ ճեմարան, մեր եկեղեցու վարդապետների ուսման կենտրոն՝ և գրիչների դպրոց:

Շրջանի բոլոր եկեղեցիների և վանքերի հետ միասին, այդ երկու վանքերը փակվել և ազդարարվել են մեծ հալածանքների ժամանակ: Արցախի թեմի վերջին առաջնորդ՝ Վրթանես եպիսկոպոսը, 1929-ին ձերբակալվել է Գանձասարում և արքայրվել:

Երկու վանքերը եկեղեցուն են վերադարձվել 1989-ի ապրիլին: Դրանք վերանորոգվել են շրջանի հայ հավատացյալների կողմից և կրկին օձվել 1989-ի հոկտեմբերին՝ ընդմեջ ընդհանուր խանդավառության և գոհության աղոթքների առ Ամենագործ:

Այսօր այս երկու վանքերը գտնվում են Արցախյան կառավարության կողմից նոր ազդարարման առաջ՝ հակառակ ժողովրդի կամքի և Աստուծո ժողովրդի մարդկային բոլոր իրավանքները:

Մենք երկուդ ենք կրում, որ կրկին արտուն կհեղվի, եթե աղոթքեանական կառավարությունը վեճի թեմի ուժով իր որոշումը կիրառել:

Հանուն ժողովուրդների կրոնական ազատության կոչ ենք անում օգնել մեզ այս նոր փորձության ժամանակ: Հանուն քրիստոնեական հավատքի, խնդրում ենք ձեր ծայրը քայքայեցնել ի պաշտպանություն մեր աղոթապարտի՝ հանդեպ իշխանությունների այս նոր բռնության, որի միակ նպատակն է լուսության մատնել մեր քրիստոնեական եկեղեցիները:

ՎԱԶԳԵՆ Ա.

Ամենայն Հայոց Կաթողիկոս Փետրվար 12, 1991 Էջմիածին

ՔՐԵՍԿԱՆ ՔՐՈՆԻԿԱ

ԱՍՈՒՍԼՈՒ ՈՒՂԱՐԿԱԾ ԴԱՆԻՐԸ ՏՐՈՅԱԿԱՆ ՋԻՈՒ ՎԻՄ

1990 թ-ի դեկտեմբերի 4-ին ժամը 11 անց 30-ի սահմաններում Երևանի Ա. Խաչատրյանի փողոցի շենքերից մեկի թիվ 28 բնակարանի դռան գանգը գոնգաց քարձր ու երկար:

Ո՞վ է, - ներսից հարցրեց կասկածամիտ տանտիկինը:

Խնդրում են մեկ րոպեով քացեք, ինձ ձեր անուսիմն է ուղարկել, պահիր են քերել ձեզ համար:

Տանտիկուհու կասկածը նույն պահին իսկ փարտավեց, ժպիտը տարածվեց դեմքով մեկ և նա լայն քաջ արեց մուտքի դուռը: Պանրի հետ մերխուժեցին 4 «տղաներ», ինչպես քիչ հետո պարզվեց ավագակալին «լուրջ» մտադրություններով: Նրանք կապկեցին տանտիկուհուն և տունը փաստորեն սրբեցին: Բացի հագուստընրից տարան նաև 20 հազար օտարի դրամ, երկու տեսամագնիտֆոն, մեկ տեսախցիկ, տեսաժապավեններ:

Ինկտեմբերի 5-ից սկսվել է նախաքննությունը, որի ընթացքում ձեռնարկված քննչական և օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ փետրվարի 4-ին հայտնաբերվեցին ու ձերբակալվեցին «տրոյական ծիծ» կազմող քաղաքի բոլոր անդամները: Պարզվեց նաև, որ նրանցից մեկը (Միքայելյանը) նույն թվականի հունվարի 28-ին Մյասնիկյան շրջանից գողացել է ՎՊՁ 16-07 համարանիշով ավտոմեքենան: Նրա տանը խուզարկություն կատարելու ժամանակ հայտնաբերվել են երկու որսորդական հրացան, ծայնազարիներ, ռադիոընդունիչներ, ավտոմեքենաների շարժիչներ:

ՆԻԿՈՒՍՑ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԵԳ նախարարության լրատվական կենտրոնի պետ

Հայկական որևէ գաղութ, որ-
քան էլ հարուստ իր հնարավորու-
թյուններով և մարդավաճությամբ,
այսօր չի կարող համեմատվել լի-
րանահայ գաղութի հետ, ազգա-
յին իր նկարագրով թե մշակութա-
յին կյանքով: Եւ այս՝ հակառակ
16 տարիների պատերազմին, որի
հետևանքով մեծապես կրճատվել
է 1970-ականներին 275 հազարի
հասնող գաղութի թիվը դեպի Մի-
ացյալ Նահանգներ, Կանադա և
Ավստրալիա կատարված արտա-
գաղթի պատճառով, ընդհանուր-
առաջ ավերվել կամ տուժել են
հայապատկան բազմաթիվ ձեռնար-
կություններ, ազգային հաստատու-
թյուններ և խանութներ, տասա-
նորդվել են գաղութի նյութական
հնարավորությունները (այս օրե-
րին լիբանանյան դրամահիշող ամե-
րիկյան դուլարի դիմաց հասնում
է 1050-ի՝ նախատեսված մինչև 1:3
հարաբերության փոխարեն):

Այսօր հանդերձ, անմիջապես որ
խաղաղության որևէ «միջանցք» է
ստեղծվում շարունակ վերաբերել-
վող պատերազմի բռնությունում,
գաղութն իր ազգային երեք կու-
սակցություններով, մշակութային
և հարանվանական տարրեր միու-
թյուններով, երեք օրաթերթերով,
շուրջ մեկ տասնյակի հասնող
պարբերաթերթերով, ակումբներով
ու ձեռնարկներով վերադարձող թա-
փով լծվում է ազգային-մշակու-
թային գործունեության, իր ավան-
դապան և հայադուրձ հավաքա-
կանության ծանրակշիռ խտրել ա-
սելու սփյուռքյան, և ոչ միայն
սփյուռքյան կյանքում:

Երեսուցյե անգամ կարելի չէ,
որ դեռևս գործում են նախապա-
տերազմյան 64 դպրոցներից 52-ը,
բոլոր 17 եկեղեցիները, տպարան-
ների մեծ մասը, 7 քառօրյա դպրոց:
Պատերազմի առաջին տասնամյա-
կին, 1975-84, գաղութի հայկա-
կան տպարաններում, բացի մա-
մուլից, լույս է տեսել ավելի քան
550 անուն գիրք, մոտավորապես
այնքան՝ որքան մնացել էր
հայազաղութները միասին վերց-
րած: Վերջին 300 օր տեսած ա-

մենակատարի ընթացքում լիբանանա-
հայ տպարանները լույս են ընծա-
յել շուրջ 50 անուն գիրք, որոնցից
20-ը՝ «Հայ տիպ կոմպյուտերաֆ-
-Տեքնոլոգիա» տպարանից, իսկ 25-
ը՝ Տանն Կիլիկիո կարողիկոսու-
թյան հրատարակչատնից:



**ԼԻՐԱՆԱՆԱԴԱՅ ԿՅԱՆՔ ԿԱՍ
ԿՅԱՆՔՈՏ ԼԻՐԱՆԱՆ**

Օգտվելով 1990 հոկտեմբերին
հաստատված խաղաղությունից
անցնող մի քանի ամիսների ըն-
թացքում գաղութը մեծ թափով
վերսկսել է իր ազգային-մշակու-
թային գործունեությունը, կազմա-
կերպելով բազմաթիվ միջոցառու-
մներ, որոնցից մի քանիսի մասին
հակիրճ տեղեկություններ ստորև.

— Բեյրութի Ամերիկյան համա-
լսարանի դահլիճում հունվարի 4-

Նրանք նվագել են Բրուքլի,
Վենյավալու, Վերալիսի և Պ.
Չելալանի ստեղծագործություն-
ներին:

— Հունվարի 13-ին Հ.Բ.Բ.
Միության Հ. Ե. Ընկերակցության
«Անդրանիկ-Սեան» ակումբի
դահլիճում տեղի է ունեցել դա-
սախոսություն «Հայաստանի ներ-
կա վիճակը և իր դրափոխությունը»
թեմայով, որը ներկայացրել է
Լոնդոնի Բի.Քի.Սի. ուղիղախոսի

միջոցով: Պատերազմը
Հովհաննես Հելվաճյանի քեմա-
դրությամբ թատերաշրջանի քա-
ցումը կատարել է «Պատերազմը
վերջացավ» կոմեդիանով:

— Իրավաբան Գասպար Տեր-
տերյանը «Գրական շրջանակի»
կազմակերպությամբ ներկայացրել
է դասախոսություն՝ պատմություն
և սիմբոլիզմի կապերի և հայու-
թյան համար դրանց ներկայացրած
վտանգի մասին:

— «Համազգային» «Թորոս
Ռոսլին» նկարչական ակադեմիան
հունվարի 18-ին թափվել է վերա-
բացել և իր ղեկները մեծահասակ-
ների և փոքրերի համար:

ՓՈՐԻՉԱԴԱՅ ՍՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՐԱՏՈՒ

Գնահատելի նախաձեռնություն
է հանձն առել Փարիզի Ս. Մես-
րոպ մշակութային կենտրոնը,
փետրվար ամսի ամբողջ տևողու-
թյան համար «Արվեստ և մտա-
ծում» ընդհանուր վերադասության
տակ կազմակերպելով հաջորդա-
կան միջոցառումներ: Շարքի քա-
ցումը կատարվել է փետրվարի 1-
ին, ընդունելություն-հյուրասիրու-
թյամբ, որից հետո ներկայացրել
մասնակցել են փարիզահայ ճա-
նաչված նկարիչներ Արշակի,
Տատրյանի, Պարսամյանի և Գա-
լունյանի գործերի քացման հանդի-
սությանը փետրվարի բոլոր շաբա-
թավերը ներկայացրել են ունենալու
թատերական, գրական ու երա-

աշխատակից Անի Մանուկյանը:

— Փետրվարի 10-ին Թեքեյան
Կենտրոնում տեղի է ունեցել հի-
շատակի հանդիսություն՝ նվիրված
«Զարթոնք» թերթի երկարամյա
խմբագրապետ, պատմաբան և
հասարակական գործիչ Գեորգի
Անարունյանի մահվան 10 ամյա-
կին: Այն կազմակերպել էր Ռամ-
կավար ազատական կուսակցու-
թյան Լիբանանի շրջանային վար-
չությունը: Առանձին խոսքով հան-
դես չեն եկել Հովհաննես Թապա-
զյանն ու Պարույր Աղաջյանը:

— «Համազգային» մշակութա-
յին միությունը հունվարի 20-ին
Հ. Տեր-Մելքոնյան սրահում կազ-
մակերպել է հիշատակի հանդիսու-
թյուն՝ նվիրված սփյուռքահայ
տաղանդավոր բանաստեղծ և ու-
նուցիչ Մուշեղ Էջիանին, որ մե-
հացավ անցյալ տարվա մայիսին:
Ընտրամի հասարակության ներկա-
ությամբ խոսք են առել պատմա-
բան Լեոն Վարդանն ու թիշկ
Մկրտիչ Մկրտչյանը:

— Հայ հեղափոխական դաշ-
նակցության 100-ամյակի առթիվ
հունվարի վերջին Մոնթրալ և Լեոն
Հակոբյան վարժարանում կազմա-
կերպվել է ՀՀԿ մամուլի ցուցա-
հանդես՝ մատենագետ Արտաշես
Տեր-Խաչատրյանի պատրաստու-
թյամբ: Ցուցադրվել են դաշնակ-
ական 550 անուն թերթերից
300-ը:

— «Կոմիտաս» թատերախումբը
Հովհաննես Հելվաճյանի քեմա-
դրությամբ թատերաշրջանի քա-
ցումը կատարել է «Պատերազմը
վերջացավ» կոմեդիանով:

— Իրավաբան Գասպար Տեր-
տերյանը «Գրական շրջանակի»
կազմակերպությամբ ներկայացրել
է դասախոսություն՝ պատմություն
և սիմբոլիզմի կապերի և հայու-
թյան համար դրանց ներկայացրած
վտանգի մասին:

— «Համազգային» «Թորոս
Ռոսլին» նկարչական ակադեմիան
հունվարի 18-ին թափվել է վերա-
բացել և իր ղեկները մեծահասակ-
ների և փոքրերի համար:

միջոցով: Պատերազմը
Հովհաննես Հելվաճյանի քեմա-
դրությամբ թատերաշրջանի քա-
ցումը կատարել է «Պատերազմը
վերջացավ» կոմեդիանով:

— Իրավաբան Գասպար Տեր-
տերյանը «Գրական շրջանակի»
կազմակերպությամբ ներկայացրել
է դասախոսություն՝ պատմություն
և սիմբոլիզմի կապերի և հայու-
թյան համար դրանց ներկայացրած
վտանգի մասին:

— «Համազգային» «Թորոս
Ռոսլին» նկարչական ակադեմիան
հունվարի 18-ին թափվել է վերա-
բացել և իր ղեկները մեծահասակ-
ների և փոքրերի համար:

Փարիզի Ս. Հովհաննես Ար-
կերտիչ եկեղեցում «Նորինան
Ֆրեյնկան» նորակառույց սրահում
հունվարի 18-ին թափվել է Գլո-
րիա-Անահիտ Ֆրեյնկանի, Իզաբել
Մանուկյանի և Մանուկի գործերի
ցուցահանդեսը:

Բացմանը ներկա է գտնվել
Ֆրանսիայի առաջին տիկինը՝ Գա-
նիլ Միտերանը, որը մեծ հետա-
քրքրությամբ է դիտել ներկայա-
ցված կտավները, հատկապես հե-
տաքրքրվելով հայկական ցեղա-
սպանությանը և հայոց այրուք-
ինն նվիրված ստեղծագործություն-
ներով:

Ցուցահանդեսը տեւելու է մին-
չև մարտի 31-ը:

**"YOUTHQUAKER"
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
ԿԸ ՅԼՅԷ**

Լուս անընդհանրապես գաղութին
մեծան թմրած, շրջապատեն իրզ-
ուած, ամուլ և ինքն իր սուտե-
րուն հուատազող զանգուած մը
ցնցելը, նուազագույն պարագային
կը պահանջէ յանդգնութիւն, քա-
ջութիւն և անկեղծութիւն:

Շահէ Մանկրեան, իր շրջապա-
տին տիրող անատր անտերը
տեսնելով, ահագնակ կը հնչեանէ,
իր թմբիրէն արթնացնելու համար
պահանջողական ու անհոգ հայ
ժողովրդը, որ հանդուգան է թէ այդ
անտերը չեն կրնար քախանցել իր
ատմէն մերս:

Ե. Մանկրեան "Youthquaker"
ընկերութեամբ կ'ուզէ ցուց տայ,
թէ ամերիկեան երիտասարդութեան
դիմագրութեամբ տազանայնորդ կը
նպատեան ման հայ երիտասար-
դին:

Երիտասարդ, ոչ-արժեքաւոր
դերասաններ հաւաքելով իր շուր-
ջը, Ե. Մանկրեան յաջողած է վա-
ներական ու ցնցիչ գործ մը տայ,
որ իր աւարտն քաւակաւ ետք այ
հանդիսատեսին խորհիլ կուտայ իր
պատգամին շուրջ:

Թատերախումբի գլխաւոր հերո-
սը Արան, ջրային, շտարած երի-
տասարդ մըն է, որ կը գտնուի
գահավիճումի մէջ: Ան ներկայ է
ներկայացման ամբողջ ընթացքին:
Իր և իր շուրջիններուն միջոցաւ
կ'արձարծուին թմբուցիչներու
գործածման, մանուկներու եղծու-
մի, անձնասպանութեան և այլ
«արգիլեալ» նկատման հարցեր:

Հակառակ որ յայտագիրին մէջ
կը յիշուի, թէ այս թատերախումբի
նկատակը եղած է հայ և ոչ-հայ
(սեւամորթ մը՝ այս պարագային)
զույգի մը յարաբերութիւնը ներկա-
յացնելը, Արան և Ռոպինի կե-
նակցութիւնը մասնատր վեճի մը
հարց չի դառնար: Արան հայրը,
մորը ոգին և ընկերը կը խրատեն,
զոքթ կը պահանջեն, որ ան սեւա-
մորթ աղջկան հետ ամուսնանայ:

Միայն թմբուցիչ ծախող Ա-
րանն է, որ կ'առաջարկէ որ Ա-
րան հայ աղջիկ մը գտնէ, որով-
հետեւ ծնողը և գաղութը պիտի
չընդունին օտար ամուսնութիւն մը:
Թե՛րեւս թատերախումբի անձնա-
խոցելի կէտն է այս: Անի իրա-
պաշտ պիտի ըլլար, եթէ ծնողը
կամ շուրջինները գտնէ թիչ մը դէմ
կեանքին օտար ամուսնութեան
գաղափարին:

Դերասանները բոլորն ալ, հա-
կառակ որ մեծ մասամբ շատ ե-
րիտասարդ էին և յարաբերաբար
անփորձ, տախն պատշաճ և յա-
ջող կերպարներ:

Վազգէն Կարտիկեան, իր պաշ-
տուցիկ ու տաքսիս խաղաղու-
թեամբ ցնցել հանդիսատեսը: Լե-
նա Կարապետեան, որպէս Արանի
մոր ոգին, յուզեց իր քաւաչին ու
մելամաղձոտ ծանցով: Թե՛րեւս
Ռայն, Արանի սեւամորթ ընկերու-
նին, տուա համոզիչ կերպար մը:
Վահէ Մանկրեան, որպէս անհոգ
Վիկտորը, որ ընկերուց ընկերու-
նիին աչք դրած է, տպաւորիչ էր
իր դերին մէջ: Վաչէ Մարկանեան,
իբրեւ աղետալի սիրոյ գոնը, շար-
վեց դիտող սրտերը իր ցաւալի
վախճանով: Ալեքս Խորշիտեան,
խումբին թերես ամենէն փորձա-
տուն, կուլային ծախող Մարեանի
դերով ստեղծեց անմոտանալի ու
վաւերական տիպար մը: Արանի
հոր դերով յաջողապես հանդես
եկաւ քեմադրիչը Շահէ Մանկրե-
ան: Իսկ Սազո Համբարձումեան
մարմնատրեց նոր ապաշխարած
Բաֆֆիի դերը:

Նեկայացումը շատ բան շահե-
ցաւ և դարձաւ անի տպաւորիչ,
ցնցող ու սիրտ շարժող երաժիշտ
Վաչէ Մանկրեանի հեղինակած ե-
րաժշտութեան շնորհիւ:

Մեր գաղութին մէջ կան մար-
դիկ, որ յանդուգն երեսուտ մո-
լուցեն տարուած կը ձաքտեն:
Իրա խիզախութիւնը կը պահանջէ
է, որ մարդ իր շուրջի ցաւցող ի-
րականութիւնը քարծածայն պո-
նայ, երբ շրջապատը պիտի պա-
հանջէր զայն չտեսնել կամ չըն-
դունիլ: Եւ ճիշդ այս է որ կատա-
րած են Chronic Players-ի տղաքը:

Ստեղծագործել է շա-
րունակ, նույնիսկ կեանքի ամեն
դժուար տարիներուն: 1958-ին
Պրիքսելի միջազգային ցուցահան-
դեսին պարգեւատրուած է արժա-
թեայ մետալով «Արարտի Արձա-
նները» քանդակի համար: 1983-ին
Հայաստան տարած է 200-է աւե-
լի ստեղծագործութիւններ՝ նուի-
րելու գտնող Հայրենիքին: Անոր
քանդակները կը զարդարեն օտար
և հայ թանգարաններ, գրասպա-
հներ, հաստատութիւններ, որոնցմէ
յիշենք Ամերիկայի Հայոց Առաջ-
նորդարանի հիւսիսային պատին
վրայի «Խաչելութիւն»ը:

Թաղման արարողութիւնը տեղի
ունեցաւ Հինգշաբթի, Փետրուար
14-ին, Նիւ Եորքի Ս. Վարդան
մայր տաճարին մէջ: Կը նախագա-
հէր Ամերիկայի Հայոց Արեւելեան
թեմի առաջնորդ Գեորգիոս Տեր
Թաճակ Եպիսկոպոս Պարսամեանը:
Թաղման կարգին կը մասնակցէին
հոգեշնորհ հայտեր՝ Սուրեն վրդ,
Չինչինեան, Վազգէն վրդ, Գարա-
յեան, Գրիգոր վրդ, Մագաւտեան,

**ԳԵՐՄԱՆԻԱ
ՀԱՅՈՑ ՍԱՍԻՆ
ՎԱԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄ**

Գերմանիայի Բաֆֆի Բեպպա-
չյանը Փարիզի «Հառաջ» օրա-
թերթում գրում է, թե Z.O.F. հե-
ռուստատեսային կայանը վերջերս
ցուցադրել է Երվանդ Չամիկյանի
և Աննա Ռիքի Լուրի նկարահա-
նած վավերագրական մի ֆիլմ՝
«Մարդիկ, տարիներ, կյանքեր»
վերնագրով:

Բերգոլեզիի «Ստաբատ մատե-
րի» երաժշտության տակ, առանց
խուսակցական որևէ ընդմիջման,
ֆիլմը ներկայացնում է գրում է
«Հառաջ» թղթակիցը, Կովկասը,
Պետրոգրադը, Սեանը, նախախոր-
հողային և խորհրդային Հայաս-
տանն ու Արդրբայանը: Այն պատ-
մած է հայոց ճակատագրի մասին,
առանց սակայն որշակի դարձնե-
լով ներկայացվող նյութի տեղն ու
հանգամանքները:
«Շարժանկարը ներկայացնող

գերմանացի խոսնակը, գրում է Բ.
Բեպպաչյանը, կծամծներ քանի մը
ընդհանուր նախադասություններ,
լուսաբանելով ոչինչ»: Եւ վկայա-
կույնով ֆիլմի մասին «Ֆրանկ-
Ֆուրտեր Ռունդշաու» թերթի այն
դժգոհությունը, թե «միայն հետա-
քրքրվող դիտող մը կրնար պատ-
մական եղելությունները սեփական
չափերով գիրքերու մեջ պրպտել
ևսը ըմբռնել դարուս առաջին ցե-
ղասպանության մասին եզակի այս
վավերագիրը», դժգոհություն է
հայտնում ֆիլմի տեքստային ան-
հաղորդակցության մասին: Նա
տարակուսանքով է նշում, որ ըստ
երեսուցիին հեղինակները խուսա-
փել են «հայ» բառի հիշատակու-
մից, հակառակ որ ֆիլմում ցուցա-
դրվում են ցնցիչ տեսարաններ
փախչող երեխաներ, հեծյալների
կողմից հայաձվող քահանա, աքր-
վող շենքեր, սպանված դեռահաս
աղջիկներ, իր տան փլատակների
առաջ լացող մի տատիկ և հայե-
րեն ձեռագիր գրություններ՝ մի

անհայտ մարդու օրագրից, բոլորն
էլ ցեղասպանության օրերին նը-
կարված:

ՓՈՐԻՉԱԴԱՅ ՍՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՐԱՏՈՒ

Գնահատելի նախաձեռնություն
է հանձն առել Փարիզի Ս. Մես-
րոպ մշակութային կենտրոնը,
փետրվար ամսի ամբողջ տևողու-
թյան համար «Արվեստ և մտա-
ծում» ընդհանուր վերադասության
տակ կազմակերպելով հաջորդա-
կան միջոցառումներ: Շարքի քա-
ցումը կատարվել է փետրվարի 1-
ին, ընդունելություն-հյուրասիրու-
թյամբ, որից հետո ներկայացրել
մասնակցել են փարիզահայ ճա-
նաչված նկարիչներ Արշակի,
Տատրյանի, Պարսամյանի և Գա-
լունյանի գործերի քացման հանդի-
սությանը փետրվարի բոլոր շաբա-
թավերը ներկայացրել են ունենալու
թատերական, գրական ու երա-

**ԽՈՐԷՆ ՏԵՐ-ՅԱՐՈՒԹԵԱՆԻ
ԹԱՂՈՒՄ**

Հայաստանեայց Առաքելական Ե-
կեղեցու Միացյալ Նահանգների Ա-
րեւելեան թեմի առաջնորդարանից
ստացել ենք հետևեալ թղթակցու-
թյունը:
Ինչպես յայտնի է, Ամերիկահայ
մեծ բնակավայրը Խորեն Տեր
Յարութեան ինքնաշարժի արկածի
մը հետևանքով կընց իր մահկա-
նացում, Հինգշաբթի Փետրուար 7-
ին, Նիւ Եորքի մերձակայ խնուրի
մը վրայ:
Խորեն Տեր Յարութեան ծնած է
Պատմական Հայաստանի Արտա-
սան (այսօր Արվանդ) գիւղը, որ կը
գտնուի Խարբերդի գաւառին մէջ, 2
մարտ 1909-ին: Եղեւնին աք-
տրական, հաստատուած է Մ.
Նահանգներու Ուստուր քաղաքը:
1930-1944 տարիներուն ապրած է
Չիւսապա, հուսկ հաստատուած է
Նիւ Եորք: Ստեղծագործել է շա-

րունակ, նույնիսկ կեանքի ամեն
դժուար տարիներուն: 1958-ին
Պրիքսելի միջազգային ցուցահան-
դեսին պարգեւատրուած է արժա-
թեայ մետալով «Արարտի Արձա-
նները» քանդակի համար: 1983-ին
Հայաստան տարած է 200-է աւե-
լի ստեղծագործութիւններ՝ նուի-
րելու գտնող Հայրենիքին: Անոր
քանդակները կը զարդարեն օտար
և հայ թանգարաններ, գրասպա-
հներ, հաստատութիւններ, որոնցմէ
յիշենք Ամերիկայի Հայոց Առաջ-
նորդարանի հիւսիսային պատին
վրայի «Խաչելութիւն»ը:

Թաղման արարողութիւնը տեղի
ունեցաւ Հինգշաբթի, Փետրուար
14-ին, Նիւ Եորքի Ս. Վարդան
մայր տաճարին մէջ: Կը նախագա-
հէր Ամերիկայի Հայոց Արեւելեան
թեմի առաջնորդ Գեորգիոս Տեր
Թաճակ Եպիսկոպոս Պարսամեանը:
Թաղման կարգին կը մասնակցէին
հոգեշնորհ հայտեր՝ Սուրեն վրդ,
Չինչինեան, Վազգէն վրդ, Գարա-
յեան, Գրիգոր վրդ, Մագաւտեան,

Արժանաշնորհ Տեր Տաճատ աւագ
քնն. Դաւիթեան, Արտն աւագ
քնն. Ալեքեան, Առնակ աւագ քնն.
Գասպարեան, Գարեգին քնն.
Գասպարեան:

Աշխարհահռչակ երգեհոնահար
Պերճ Ժամկոչեան և երգչուհի
Մարո Փարսամեան կը կատարէին
ոգեղէն շարականները:

Թաղման արարող

1990 թվականի 3-ին բուրգական հեռուստատեսության (TRT-1) «32-րդ օր» ամսական ծրագրով հեռափոխվեց բուրգ հայտնի լրագրող Մեհմեդ Ալի Բիրանցի հարցազրույցը Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական հարաբերությունների նախարար Եսայի Ստեփանյանի հետ, հայ-բուրգ հետազոտող հարաբերությունների մասին նրա ունեցած պատկերացումների շուրջ: Այդ պահից սկսած ծայր առավ սուր բանավեճ սփյուռքահայ և տեղական մամուլի էջերում, տարազան հավաքներում, ...հիմնարկներում ու տներում: Խստորեն քննադատվեց նախարար Ե. Ստեփանյանը:

Անշուշտ, Թուրքիայի հետ հակակամ պետականության ունենալից հարաբերությունների մասին վեճն սկսվել էր շատ ավելի վաղ, դեռևս 1989 -ին, երբ մամուլում թե այլուր եղան կույրներ Հայոց համազգային շարժման տեսարանների և այլուց կողմից, իսկ հետագայում՝ արդեն Հայաստանի նորաստեղծ խորհրդարանում՝ հոշակագրի համապատասխան հողավածի առթիվ բանավեճների ընթացքում: Ու տակավին՝ շատ ավելի վաղ, 20-30-ական թվականներին, երբ Հայաստանի հանրապետության այն ժամանակվա վարչապետներից Ալ. Խատիսյանը Պոլսում մեղադրում էր արևմտահայերին, թե չեն կարողացել լեզու գտնել «չենդմեն բուրգերի հետ», նաև հետագայում, երբ արդեն վտարանդի դարձած դաշնակցական ղեկավարներից ոմանը, Ռուբեն Գարրիբյանի գլխավորությամբ, ներկայացնում էին, այսպես կոչված, «բուրգական օրինակներ» և հավաքվել էին, Դրոյի ղեկավարությամբ, «Պրոմեթեոսյան ուխտի» շուրջը:

Սակայն այս և հարակից հարցերի մասին, հետագայում: Մինչ այդ՝ կողքի սյունակներում ներկայացնում ենք բուրգական մամուլի արձագանքները Հայաստանի Հանրապետության քաղաքական նոր հետազոտողների կապակցությամբ:

**ԲԻՐԱՆԴԻ
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ
Ե. ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԵՏ**

ԲԻՐԱՆԴԻ - Հնում մեզ հետ քարեկամ չէիք, այժմ ի՞նչ պատահեց, ի՞նչն է փոխվել, որ սերտանալ եք ուզում: Տնտեսական դժվարությունների մեջ եք ընկել, դրա համար եք ցանկանում համագործակցել մեզ հետ:

ՍՏԵՓԱՆՅԱՆ - Ես կարող եմ պատասխանել՝ ոչ, որովհետև մենք անկախության առաջին քայլերն արել ենք մի քանի ամիս առաջ: Մեր հիմնական քաղաքականությունն է՝ այսուհետև կապի մեջ մտնել ոչ միայն Մոսկվայի, այլ նաև ողջ աշխարհի երկրների հետ: Նախապատվությունը ցանկանում ենք տալ հարևան երկրներին: Նախատեսում ենք կիրառել իրատեսական քաղաքականություն: Թուրքիայի և Հայաստանի միջև ոչ մի կապ գոյություն չունի: Մենք ցանկանում ենք սկզբ դնել այդ հարաբերություններին: Թուրքիայի հետ համագործակցելով՝ մեր նպատակը խանութները լցնելն ու տնտեսական բոլոր հիմնարկները լուծելն է: Եթե նման նպատակ ունենանք, ապա առաջին հերթին կդիմենք Ամերիկային, Ֆրանսիային, նման այլ երկրներին և սփյուռքահայությանը: Այդ դեպքում մենք ավելի շուտ արդյունքի կհասնենք: Հետևաբար, Թուրքիային մոտենալու պատճառը տնտեսական դժվարությունները չեն:

Մ.Ա.Բ.- Կոնկրետ ի՞նչ սպասելիքներ ունեք Թուրքիայից, ուզում եք զարկ տալ սահմանամերձ առևտրին, թե՛ այլ ծրագրեր ունեք:

Ե.Ս.- Պետք է ասել, որ տնտեսության բնագավառում մեզ համար կարևոր հարց է լուրջ հարաբերությունների մեջ մտնելը, և դա մենք կարող ենք անել: Այդ գործին կարող ենք լծվել երկաթուղու միջոցով: Հնարավոր է ավելացնել գոյություն ունեցող գծի կարողությունը: Դա օգտակար կլինի նաև Թուրքիայի համար: Այդ ճանապարհը կարող է վերածվել կենսական ուղու: Կարող ենք օգտվել նաև սահմանամերձ առևտրի հնարավորությունից, ապրանքների փոխանակությունից: Մենք պատրաստ ենք մասնակցելու ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև 1989թ. ստորագրված պայմանագրին: Սահմանափակ անցուղիների մեջ կարևորություն ենք տալիս, կարելի է ազատ թողնել մարդկանց երթուղիները: Օրինակ, քայքայված Մարգարայի սահմանափակ ուղեկալով:

Մ.Ա.Բ.- Հարգելի նախարար, անկախ մեր կամից, տարօրինակ իրավիճակ է ստեղծվում: Խորհրդարանում մի որոշ ժամանակ առաջ չեղյալ համարեցիք Թուրքիայի և Հայաստանի, ինչպես նաև

ձեր և Ադրբեջանի միջև սահմանները որոշող Մոսկվայի պայմանագիրը: Մեկ ասում եք, թե Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը չեք ճանաչում, մեկ էլ Թուրքիայի նկատմամբ պահանջներ եք ներկայացնում: Ամենուրեք զգացվում է, որ միջազգային արժավ է տարվում այդ ուղղությամբ: Այդքանից հետո էլ մեզ առաջարկում եք համագործակցել և ոտք դնել նոր ժամանակաշրջան: Դա ինչպե՞ս եք պատկերացնում:

Ե.Ս.- Եթե ես հիմա ասեմ, որ ամեն ինչ կվերջանա և կփոփոխվի, միշտ չեմ լինի: Ժողովրդավարության պայմաններում ցուրտ քննարկումները և սփյուռքում գործող տարրերը կազմակերպություններին չենք կարող ասել և ստիպել, որ պետք է որդեգրեն այս կամ այն քաղաքականությունը: Ես այստեղ կարող եմ խոսել միայն իմ կառավարության անունից: Մենք չենք կարող խառնվել այլուց գործերին: Կառավարության տեսակետը շատ պարզ է. կարելի է համագործակցել մուսուլման գոյություն ունեցող տարածություններին առկայությամբ:

Մ.Ա.Բ.- Այսինքն՝ ուզում եք ասել, որ մի կողմից համագործակցությունը շարունակվելու է, մյուս կողմից նեղամի տակից մեկս մյուսին աջացի ենք տալու, այո՞: Այդպե՞ս պետք է հասկանալ:

Ե.Ս.- Ես կարող եմ ասել, որ կառավարությունը սեղանի մոտ է նստած և հարցերը քննարկում է քաջահատ կերպով: Սակայն սեղանի տակ էլ կարող են ուրիշ ուժեր լինել: Դրանք կարող են լինել թե՛ ձեր կողմից, և թե՛ մեր: Սակայն դրանք կառավարության ոտքերը չեն լինի:

Մ.Ա.Բ.- Արդյոք վերջ կդրվե՞ն արշավներին, մեղադրանքներին, պահանջներին: Ավելի ճիշտ՝ Թուրքիայի նկատմամբ մինչև օրս Հայաստանի Հանրապետության ունեցած թշնամական կեցվածքը կփոխվի՞ արդյոք:

Ե.Ս.- Դա կախում ունի այն երկու երկրների դիրքորոշումից, ովքեր պատճառ են դարձել հարցերի ծագմանը: Պետք է հասկանանք, որ երկու երկրների միջև քարեկամությունը երկու կողմերի համար էլ օգտակար կլինի: Եթե Թուրքիան պատրաստ է և կընթացի այդ, ապա կարող եմ ասել, որ մենք նոր ժամանակաշրջան ենք ոտք դնում: Իմ կարծիքով, մենք մեր կողմից մեզ տված առաջին քայլն արել ենք: Գիվանդապետական միջոցներով հայտնել ենք, որ ցանկանում ենք Թուրքիայի հետ կապի մեջ մտնել: Այժմ սպասում ենք Թուրքիայի պատասխանին: Նախ պետք է կապը հաստատվի, որպեսզի որոշվի հարաբերությունների բնույթը:

Մ.Ա.Բ.- Դա վերին աստիճանի կարևոր որոշում է: Անշուշտ, այդ որոշումը ընդդիմադիրներ կունենան և ներսում, և դրսում: Դրանք չե՞ն խանգարի որոշման իրագործմանը:

Ե.Ս.- Պետք է ասել, որ ցանկացած քաղաքականության մեջ և հատկապես շրջադարձային կետերում, դիմադրության ճակատ անպայման լինում է: Այժմ էլ կա: Մեզ համար կարևորը ներքին ընդդիմադիր ուժն է, քանի որ մեր հանրապետության գոյությունը և կեցվածքը դրանով է պայմանավորված: Ինչ վերաբերում է սփյուռքին, ապա մինչև այսօր այն լրիվ խորությամբ ուսումնասիրված չէ: Հնարավորություն չունիք: Առաջիկա փետրվարին մենք Հայաստան ենք հրավիրել աշխարհի բոլոր հայ համայնքները ներկայացնող կազմակերպությունների ղեկավարներին և գործարար մարդկանց: Այդ ժամանակ մենք երևանում հնարավորություն կունենանք ծանոթանալու այս հարցի վերաբերյալ սփյուռքահայության ունեցած կարծիքին: Սակայն նշեմ, որ սփյուռքահայության կարծիքը չի կարող լուրջ ազդեցություն գործել մեր քաղաքականության վրա:

Մ.Ա.Բ.- Դրսի հայություն՝ ո՞ն է ավելի շատ ազդում ձեզ վրա, թե հակառակը: Սա այնքան էլ պարզ չի հասկացվում:

Ե.Ս.- Ես արդեն ասացի, որ մեր ներկա կառավարությունը Թուրքիայի դեմ քարոզական արշավ չի ծավալել: Սփյուռքահայությունը մեզ տնտեսական օգնություն է ցույց տալիս և հնարավորություն է ստեղծում տար-

իորք, դուք պետք է կարողանա՞ք այդ բոլոր տարածայնությունները սրբել, անցյալը մեկ կողմ դնել և, նոր էլ քայքայվել՝ գործակցել բուրգական այս գործունի հետ, թե՛ այս բոլորը միայն անուղջներ են:

Ե.Ս.- Վերջից գամ, եթե ինձ թույլ կտայք: Այ, դա անուղջ կամ երազանք չէ: Ընդհակառակը, սա ճշմարտություն է: Աշխարհը շատ է փոխվել: Այսօր արդեն անցյալում միմյանց թշնամի և հակառակորդ երկրները կարողանում են սեղանի շուրջ նստել և բանակցությունների միջոցով իրենց հարցերը լուծել: Մենք էլ, երբ դրա հերթը գա, կարող ենք մի սեղանի շուրջ նստել և, ընդհուպ մինչև պատմական հարցերը, քննարկել ու ընդհանուր արդյունքի հասնել: Ես համոզված եմ, որ երկրները պետք է իրար հետ քարեկամաբար ապրեն: Ողջ աշխարհում պետք է վերջ տալ հարևան երկրների միջև գոյություն ունեցող թշնամանքներին, և բոլոր երկրների ժողովուրդները 2000 թիվը պետք է ոտք դնեն որպես համերաշխ ընտանիք:

**ՓՈՒՆԱԽԱՐԱՐ
Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆԿԱՐԱՅՈՒՄ**

Սփյուռք կոչվածը հայերի և բուրգերի միջև գոյություն ունեցող հարցերի հետևանքն է: Հայաստանը պահպանում է Թուրքիայի հետ իր սահմանները: Անցյալ ղեկավարների 19-ին Անկարայի մեջ գումարված Սեւծովյան երկրների քարտուղյան և

ՀԱՅ-ԹՐՈՒՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

թեր երկրների հետ կապի մեջ մտնելու համար: Երկարաժամկետ հետ սփյուռքահայությունն էր, որ ԱՄՆ-ից, Խտայից և Ֆրանսիայից եկող օգնությունը կազմակերպեց: Մենք սփյուռքին չենք կարող ղեկավարել և ազդել նրա վրա: Սփյուռքը քաղաքակրթական և քաղաքական ու հետաքրքրական մի երևույթ է: Գործնականում դա հնարավոր չէ: Միայն ես այն պլանումն եմ, որ իբր սփյուռքն է մեզ ղեկավարում: Մենք իշխանության գլուխ կանգնեցինք ղեկավարական ընտրությունների շնորհիվ: Դրանից եկող հրահանգներին մենք չենք ենթարկվում: Ոչ ոք չի կարող մեզ վրա ազդել: Մենք պատրաստ ենք Թուրքիայի հետ առևտրական, գրոսաշրջանի և քաղաքական հարաբերությունների մեջ մտնել:

Մ.Ա.Բ.- Շատ քարի, այս բոլորը շատ լավ է: Սակայն մինչև այսօր, ուղիղ 15 տարվա ընթացքում՝ 40 անմեղ բուրգ դիվանագետ զոհվեց: Նրանց սպանողներն էլ հայեր էին և կամ հանդես էին գալիս հայերի անունից: Ուզում եմ ձեզ հարցնել, դուք որպես Հայաստանի Հանրապետություն, դատապարտում եք անհրեյական այդ արարքները, թե՛ ընդունում եք: Գուցե համակարգը եք տաժում այդ երեսույթի նկատմամբ:

Ե.Ս.- Ես անձամբ դատապարտում եմ անհրեյությունը: Դրան որիչ ավելացնելու խոսք չունեմ: Ոչ մի քաղաքակիրք պետություն չի արդարացնում անհրեյությունը: Այն հակամարդկային երևույթ է: Մեր կառավարությունը այս չի ընդունում և չի դիտում որպես որևէ հարցի լուծման միջոց: Վերջին 15 տարվա ընթացքում տեղի ունեցածների համար ցավում եմ: Ով էլ արած լինի դա, հայերը թե՛ ուրիշները, մենք այն դատապարտում ենք և դեմ ենք դրան:

Մ.Ա.Բ.- Հարգելի նախարար, Թուրքիայի հետ պատմական պլանումների վրա հիմնված շատ պատմական հիմնահարցեր ունեք: Նույնը Ադրբեջանի հետ: Նրանցից էլ հողային պահանջներ ունեք: Այսուհանդերձ, ձեր գրաված աշխարհագրական դիրքի հետևանքով ստիպված եք ապրելու բուրգական գործունի առկայությամբ:

տնտեսական համագործակցության ժողովի ավարտից հետո, բուրգ լրագրողի կողմից Հայաստանի փոխ արտաքին գործընթացի նախարար Աշոտ Եղիազարյանին ուղղված այն հարցին, թե Հայաստանը ցանկանում է փոխել 1921 թ. Մոսկվայի համաձայնությամբ ճշդ վերած սահմանները, հայ պաշտոնատարը պատասխանել է՝ ասելով, թե այս խնդրի մեջ բյուրի-մատուցություն կա. «Ժիշտ է, Հայաստանի Խորհրդարանում մի քանի պատգամավորներ կանց առանձին բուրգ և հայկական սահմանները քարեկամաբար հարցի վրա, ասել է Եղիազարյանը, քայքայ Խորհրդարանը այդպիսի որոշում չի քվեարկել: Այսինքն, Հայաստանի կառավարությունը որևէ պաշտոնական հայտարարություն չի արել, թե չի ճանաչում այժմյան սահմանները: Քանի դեռ այդպիսի որոշում և հայտարարություն չկա, նշանակում է այժմյան սահմանները ուժի մեջ են»: Եղիազարյանն ավելացրել է, թե հայերը պահպանում են Թուրքիայի հետ իրենց ունեցած սահմանները:

Անկարայի մեջ քաղված վերը նշված ժողովին առաջիմ մասնակցում են չորս երկրներ՝ Թուրքիան, Ռումինիան, Բուլղարիան և Խ. Միությունը:

Խորհրդային պատվիրակությունը ներկայացնում էին վեց հանրապետություններ, այդ թվում Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը: Հայաստանը ներկայացնում էր փոխ արտաքին նախարար Աշոտ Եղիազարյանը, Ադրբեջանը՝ արտաքին նախարար Հուսեյն Սադեգովը:

Ժողովի նպատակն էր դեպի Սեւծով ելք ունեցող կամ դրան մերձավոր երկրների միջև Ընդհանուր շուկայի օրինակով համագործակցություն ստեղծել ոչ միայն Սեւծովի փոխարարական հրահարվողություններից օգտվելու, այլ նաև այդ երկրների միջև հաշտության և քարեկամության կապեր հաստատելու համար:

Ըստ «Հուրիթ» թերթի, ժողովին առջերբ հայ-ազերի քարծմակարդակի հանդիպում է կայացել:

Թուրքերի համար ամենաշա-

նակալից Հայաստանի ներկայացուցչի մասնակցությունն էր: Թուրք լրագրողների զանազան այլ հարցերի Աշոտ Եղիազարյանը պատասխանել է.

«Հանրապետությունները այսուհետև կարող են անկախ քաղաքականություն վարել թե՛ մեկը, թե՛ արտաքին հարցերում: Օրինակի համար, որևէ հանրապետություն, որ մասնակցում է Սեւծովյան համագումարին, կարող է հրաժարվել այս ծրագրին մասնակցելու իր սկզբնական որոշումից: Սակայն մենք շատ հետաքրքրական ենք գտնում Թուրքիայի ծրագիրը: Այս ծրագիրը տնտեսական տեսակետից քաղաքակրթական ենք գտնում Թուրքիայի համար: Մենք գտնում ենք, որ այս ծրագիրը հրավեր է իրականացնելու համար Թուրքիայի և Հայաստանի միջև տնտեսական գործակցություն»:

Պատասխանելով Լեոնային Դարաբաղի առնչությամբ ուղղված հարցերին, Աշոտ Եղիազարյանն ասել է, թե այս հարցը օրակարգի խնդիր դարձավ վերակառուցման քաղաքականության շնորհիվ: Դարաբաղի հայերը տեսան, որ պետք է սրբագրվեն անցյալում գործված սխալներն ու պատմական անարդարությունները: Դրա համար էլ նրանք որոշեցին անկախություն և ինքնավարություն հայտարարել: Այս հարցը ուղղակի կերպով կապ չունի Հայաստանի հետ: Խորհրդային զինվորները այս խնդրում ադրբեջանցիների կողմն են բռնում: Հայերը զենք են վերցրել պարզապես ինքնապաշտպանվելու համար:

Եղիազարյանն ավելացրել է, թե Հայաստանը ջանում է լուծել այս անբնական կացությունը: Դարաբաղի խնդիրը քաջասկսած ազդեցություն է գործել Հայաստանի և Ադրբեջանի հարաբերություններին վրա: Ինչ վերաբերում է հայկական անհրեյական արարքներին և Ամերիկայի հայկական լոբիի աշխատանքներին, Եղիազարյանը հայտարարում է, թե այս ամենը արձագանք է 70 տարի առաջ պատահած ցավալի դեպքերի: «Հայերը, որ ցրվեցին աշխարհով մեկ, շատ են տառապել, հայերի այս զգայնությունը շատ բնական է: Այս հարցի մասին ես Մոսկվայի ձեր դեսպանի հետ էլ եմ խոսել: Թուրքերի և հայերի միջև հարցեր կան: Սփյուռքը կոչվածը ինքը դրա հետևանք է: Մեզ հրավիրել է բուրգական կողմը: Մրանից առաջ ոչ պաշտոնական շփումներ ենք ունեցել: Թող երկխոսություն սկսվի մեր միջև: Նստենք ու միասնաբար քննենք այս հարցերը: Սեւծովյան համագործակցության ծրագիրը կարող է նախաքայք լինել դրա համար: Մենք էլ Մոսկվայի ձեր դեսպանին ենք հրավիրել»,- ասել է Եղիազարյանը:

**ԻՆՉՈՒ՞ Է ԹՐՈՒՔԻԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՈՒՈՐ
ԳՆՈՒՄ**

«Գյունեշ» թերթն իր անցյալ ղեկավարների 6-ի համարում հակարդում է Հայաստանի կողմից Թուրքիայի հետ համագործակցություն հաստատելու ուղղությամբ կատարված առաջարկին: Թերթը գրում է, թե որոշ շրջանակներ հակադրել են ավագ դեսպան Կոլբան Կուրալի Հայաստան այցելելու որոշման վրա: Այս շրջանակները նկատել են տալիս, թե քանի դեռ Հայաստանը չի հրաժարվել թուրքերի դեմ իր թշնամական կեցվածքից, հայերի հետ ցանկացած հարաբերություն, բացի թուրքերի նկատմամբ առավել թշնամից հրահրելուց, այլ քանի չպիտի ծառայի:

«Գյունեշը» այս կապակցությամբ հարցումներ է ուղղել արտաքին նախարարության քան-

քեր Մուրադ Սունքարին, որը պատասխանել է երկու օր ուշացումով: Սունքարն ասել է, թե սկզբունքորեն Թուրքիան դեմ չէ Հայաստանի հետ տնտեսական համագործակցությանը: «Թուրքիան կողմնակից է իր բոլոր հարեւանների հետ հարաբերություններ հաստատելուն, որոնք հիմնված պիտի լինեն միմյանց ներքին գործերին չմիջամտելու, միմյանց հողային ամբողջականությունը հարգելու և փոխադարձ քաղաքականության ընկալունքների վրա: Թուրքիան ակնկալում է, որ հարեւաններն էլ նույն սկզբունքները որդեգրեն», ասել է Մուրադ Սունքարը:

Այս պայմաններում, շարունակել է նա, Վոլքան Վուրալի Հայաստան այցելելն էլ կարող է բընական դիտվել:

Նախկին դեսպան և հրապարակախոս Ջոն Բոնոն, որը դրանից առաջ Հայաստանի կողմից արված առաջարկի դեմ սուր հողված էր գրել, այս անգամ նույնպես հակադրվել է տնտեսական հարաբերությունների հաստատմանը և ասել է հետևյալը.

«Մա ի՞նչ տեսակ դիվանագիտություն է: Ինչու՞ է Թուրքիան Հայաստանի դուռը գնում: Հայերը մախ բող հայտարարեն, թե հրաժարվում են հողային պահանջներից: Մենք ինչու՞ ենք նրանց մոտ դեսպան ուղարկում, մինչդեռ նրանք հայտնում են, թե իրենց են վերապահում նախքան կարծիքները: Մա մեծ խաչատարություն է»: Արեւմտյան մամուլը նույնպես Հայաստան այցելությունը մեկնաբանում է որպես ցեղասպանության պնդումների ճանաչում:

րությունների նախարար Եսայի Մոնիանյանի մասին է: - խմբ.): Այսպիսի պայմաններում Վոլքան Վուրալը Հայաստան պիտի այցելի: Նաեւ՝ նախագահ Օզալի հրահանգով:

Չոլքուն Բըրջան ասել է, թե ոչ ոք չի ցանկանում ոտնակոխ անել Հայաստանին, քայց կան պայմաններ, որ պիտի հարգվեն, որպեսզի Թուրքիան Հայաստանին արտոնի: Սեւ ծովի վրայով Արեւմուտք դուրս գա: 1) Հայաստանը պետք է հրաժարվի Դարաքաղը պահանջել: 2) Հայաստանը պետք է հայտնի, թե ճանաչում է Թուրքիայի և Ադրբեջանի հետ ստորագրված համաձայնագրերը: 3) Հայաստանը ոչ մի քարոզչություն չպիտի անի Թուրքիայի և Ադրբեջանի դեմ:

ԵՐԵՐ ՄԻԼԻՈՆԱՆՈՅ ԹԵՎԱՌ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԷ, ՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՊԻՏԻ ԹԵԼԱՂԻ

«Թերջուման» քերթում ԹԱՀԱ ԱՐՃՈՒԸ հրատարակել է մի խմբագրական «Հայկական քարեկանություն» խորագրով: Հողվածագիրը հիշեցնում է «32-րդ օր» ծրագրով մեջտեղ հանված հարցը, հիշեցնում նաեւ, թե հայերը քայքայված հայտնում են, թե մնում են ցեղասպանության մասին իրենց կարծիքին, այս քոլորից հետո շարունակում վերլուծել Հայաստանի վերջին իրադարձությունները: Հայերը վերջերս քննիչ հանձնախումբ են կազմել, որպեսզի ընեն

ԹՈՒՐԻՔ ՄԱՍՈՒԼԻ ԷԶԵՐՈՒՄ

«Եթե հայերը տնտեսական հարաբերություններ են պահանջում, ասել է Չոլքուն Բըրջան, ուրիշ միջոցներ կան նրանց նպատակները ընձեռնում համար: Նրանք Թուրքիա են գալիս և տեսակցություններ են ունենում ոչ թե մեր քաղաքացիներին հետ, այլ գործարար մարդկանց, առևտրական պայատի վարիչների հետ: Թուրքիան էլ նախ և բնում նրանց նպատակները: Առանց այսպիսի նախաքայլի դեսպան ուղարկել Հայաստան նշանակում է նվեր տալ հայերին»:

Բըրջան ասել է, թե երկրների միջև անկարելի է տնտեսական հարաբերություններ ստեղծել առանց լուծվելու նրանց միջև եղած հարցերը: Մրա լավագույն օրինակը Իսրայիլի համաձայնությունն է: Այնուհետև նա շարունակել է.

«Եթե միայն Ադրբեջանի տընտեսական քոլկոտը այսքան խղճով վիճակի է մատնել Հայաստանին, ապա ի՞նչ պիտի լինի նրա վիճակը, եթե Թուրքիայի հետ էլ վատ հարաբերություններ ունենա: Անկասկած է, որ հայերը մեր կարիքն ունեն: Նրանք ցանկանում են Թուրքիայի վրայով Արեւմուտք հասնել: Ուրեմն իրենք թող մտածեն այդ մասին, ոչ թե մենք»:

Միջին Արեւելքի Տեխնիկական համալսարանի պատմության ամբիոնի դասախոս Եուլուդ Թեքին Կուրաթը այսպես է արտահայտվել.

«Եթե իսկապես Հայաստանը ցանկանում է համագործակցություն, մախ բող հայտարարի, թե Թուրքիայից հողային պահանջ չունի, իսկ աներկյան կոնգրեսն էլ ետ առնի Հայկական բանաձևը: Հայաստանն իր անկախության հռչակագրում Թուրքիայի մասին խոսելիս օգտագործել է «Արեւմտյան Հայաստան» արտահայտությունը և կրկնել Դարաքաղի մասին իր հողային պահանջները: Լեւոն Տեր-Պետրոսյանն Ամերիկայում տնտեսական հարաբերություններ է առաջարկել «Թուրքիայի հետ քաղաքական տարակարծությունները վերապահելու պայմանով»: Նույն տրամադրությունն է արտահայտել «32-րդ օր» ծրագրով խոսող հայ նախարարը (խոսքը Հայաստանի արտաքին տնտեսական հարաբե-

այծմյան սահմանների վավերականությունը: Երեսփոխան Վիկտոր Համբարձումյանը Գորքաչովի աչքերի մեջ նայելով գոչել է, որ «Կարսը, Ադրաբանդը և Տրապիզոնը հայկական հողեր էին»:

Հայերը պիտի մնան իրենց այս կարծիքին, սփյուռքահայերն իրենց դրամական ամբողջ ուժը Թուրքիայի հողերի վրայով պիտի հոսեցնեն դեպի Հայաստան, իսկ մենք տնտեսական համագործակցության պիտի ստեղծենք: Մարգարայի դուռը քայքայեք, արեւմտյան ընկերություններն էլ համատեղ մերդրումներ անեն Հայաստանում:

Հայերը այս պայմաններն են առաջ քաշում:

Այնուհետև հողվածագիրը շարունակում է.

«Մինչդեռ երեք միլիոնանոթ թվառ Հայաստանը չէ, որ պիտի պայմաններ թելադրի, այլ 60 միլիոնանոթ զարգացած Թուրքիան Հայաստանը փակ երկիր է՝ շրջապատված Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի կողմից, ելք չունի դեպի ծով և այս երեք երկրների հետ էլ կոչվ ունի: Վրացիների հետ՝ հողային տարակարծություն, ազերիների հետ էլ Դարաքաղի հարց: Տասը հազարանոց հայ զաղտնի բանակը շարունակում է հարձակվել ազերիների վրա: 300 հազար ազերիներ էլ ահաբեկչությանը և ցեղասպանությանը հետաքննել են Հայաստանից»:

Հողվածագիրը այդ պայմանները թվելուց հետո հարց է տալիս, թե Թուրքիան պիտի մոռանա՞ հայոց պնդումները, պիտի կարողանա՞ տարբեր մերձեցում ունենալ սփյուռքի հայության նկատմամբ, վերջապես պիտի կարողանա՞ կանաչ լույս վառել Հայաստանի առջև:

«ԹՈՒՐԻՔԻԱՆ ՈՂԻԼԶ ԶԻ ԿՈՐՅՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾՈՒԿՆԵՐԻՎ»

Լուրջ պետությունները զգացմունքներով չեն առաջնորդվում: Ամեն ինչից առաջ իրենց շահերին են հետևում: Իրենց քաղաքակա-

նությունը չեն անշարժացնում՝ անցյալի մնացած դեպքերի և կաղապարադի պատկերացումների վերա հիմնվելով: Մանավանդ այսօրվա աշխարհում, ուր ամեն ինչ արագորեն փոխվում է, հնարավոր չէ խուսափել տարունը վերացնելուց և նոր հարաբերություններ չհիմնել:

Լուրջ պետությունների համար միմյանց հետ հարաբերություն հաստատելու, իրար վրա ազդեցություն գործելու երկու ճեւեր կան. երկխոսություն և տնտեսական համագործակցություն:

Որ պետության հետ որ երկխոսություն և տնտեսական հարաբերություն հաստատեք, որա վրա մեր ազդեցությունը կուժեղանա: Եթե հակառակը մտածեք, եթե ամեն տեսակ հարաբերությունից և երկխոսությունից խուսափեք, այդ երկրի վրա որեւէ ազդեցություն չեք կարող ունենալ: Մինչդեռ մի երկիր, որ ձեզ հետ հարաբերություններ ունի, ձեզ թշնամություն անելու դեպքում պարտավոր է երկու անգամ մտածել և լավ հաշվել, թե ինչեր պիտի կորցնի այդ քայլից դիմելով:

Ոմանք կարող են մտածել այսպես. «Ինչու՞ հարստացնեք Հայաստանը, որ պատմության առաջին օրից ի վեր անհամբաւոտացրել է շրջանի բոլոր թուրք տարրերին: Նա եթե ոտքի կանգնի, կարող է դարձյալ վերադառնալ իր հին քաղաքակաւությանը: Ինչու՞ օգնեք, որ ուժեղանա»:

Մենք կարծում ենք, որ Թուրքիան, Հայաստանի հետ համագործակցելով, ոչինչ չի կորցնում, ընդհակառակը՝ շահում է:

1. Ամեն ինչից առաջ, կա մի կողմից 55 միլիոնանոց հսկա պետություն, մյուս կողմից երեք միլիոնանոց մի փոքրիկ երկիր, որի ուժեղանալը երկար ժամանակ է պահանջում: Թուրքիան ֆիզիկապես որեւէ վախ չի կարող ունենալ Հայաստանից: Ընդհակառակը՝ Հայաստանը պիտի վախենա այսպիսի համագործակցությունից: Հենց որ Հայաստանի ճանապարհը սկսի Թուրքիայով անցնել, հենց որ Թուրքիան մատակարարի Հայաստանի էլեկտրականության մի մասը, ամբուսափելի կամուրջ դառնա դեպի Եվրոպա և Ամերիկա ու սահմանային առևտրով ապահովի Հայաստանի կարիքները, հասարակական մերդրումներով նպաստի Հայաստանի տնտեսական վերելքին, այն ավելի ուժեղ խաղաքարտեր կունենա Հայաստանի հանդեպ:

2. Այս ձեռով Թուրքիան իր կշիռը առավել չափով զգացնել կտա Կովկասյան շրջանի վրա: Թուրքիան եթե Հայաստանի հետ համագործակցություն հաստատի, Խորհրդային Միության և Արեւմուտքի համար կդառնա մի երկիր, որի խոսքը կարևորություն ունի:

3. Թուրքիայի արեւելյան շրջաններն էլ իրենց բաժինը պիտի ստանան տնտեսական այս համագործակցությունից:

4. Հենց որ Թուրքիան տնտեսապես համագործակցի Հայաստանի հետ, դժվար կլինի Ամերիկյան կոնգրեսում, Ընդհանուր շուկայում կամ ՄԱԿ-ում «ցեղասպանության» կնիքը խարանել Թուրքիայի ճակատին:

Այս քոլորի փոխարեն Հայաստանի խաղաքարտերը քացասական են: Հայաստանը մեծ ազդեցություն չունի: Եթե կա մի երկիր, որ անպայման պետք է վախենա և թշնամություն անելուց առաջ պիտի երկու անգամ մտածի, դա ոչ թե Թուրքիան է, այլ՝ Հայաստանը:

Հայաստանի կառավարությունն էլ գիտի այդ քոլորը և, հակառակ դրան, ուզում է համագործակցել Թուրքիայի հետ: Բոլորովին անտրամաբանական են մեր մտավախությունները:

Կան մի քանի պայմաններ, որոնցով հնարավոր կլինի հաստատել առողջ համագործակցություն: Նախ հարկավոր է ունենալ լայն մտածող և մեր հեռահար շահերը լավ հաշվող դիվանագիտություն: Պետք չէ, որ ամեն մեկը ծայրը գլուխը գցի. մերքին նա-

խարարությունն ու ՄԻԹ-ը (Թուրքիայի անվտանգության ծառայություն. - խմբ.) թշնամի, արտաքին նախարարությունն էլ՝ «նոր գտնված հարեւան» տեսնի ի դեմս Հայաստանի: Բոլորն էլ խոհեմ, զգուշավոր քայլեր պիտի անեն, առանց անմիջական լուծումներ ակնկալելու:

Ինչպես որ մենք չենք կարող մոռանալ մեր Գալիք Բալքարներին ու Խամաչի Էրեզներին, որոնց կորցրինք հայկական ահաբեկչության պատճառով, նրանցից էլ չենք կարող սպասել, որ փոխեն իրենց կարծիքներն ու հրաժարվեն ցեղասպանության պնդումներից:

Չպետք է իրար հետ շփոթել Սփյուռքն ու Հայաստանը: Չպետք է ակնկալել, որ Սփյուռքը անմիջապես դադարեցնի հայկական քաղաքականությունը, իսկ նրա արածների համար հաշիվ պահանջել Հայաստանի հանրապետությունից:

Որպես վերջին կետ, չպետք է մոռանանք, որ Թուրքիան մեծ պետություն է և չի կարող վախենալ այսպիսի համագործակցությունից:

Խելացի, հավասարակշիռ և համբերատար քաղաքականությամբ կարող ենք բացել մի նոր շրջան: Պետք է վստահ լինել այս հավանականությանը:

Գոնե այս առիթը չպետք է փախցնենք՝ պարզունակ հաշիվներին զոհ գնալով:

ՄԵՀԵՄԵՂ ԱՆԻ ԲԻՐԱՆԴ
«Միլիթեր», 4 դեկտեմբերի 1990թ.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՏԵ Է ՀՐԱԺԱՐՎԻ ԹՈՒՐԻՔԻԱՅԻՑ, ՆԱԽԻԶԵԻԱՆԻՑ, ԱՊՐԲԵԶԱՆԻՑ ԵՒ ՎՐԱՍՏԱՆԻՑ ՈՒՆԵՑԱՑ ԻՐ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՅԱՆՉՆԵՐԻՑ

«Թերջուման» քերթը իր 1990 թ. դեկտեմբերի 7-ի համարում գրում է, թե Մուրադսի համաձայնությունը թուրքերի երկու հայտնի միջոցներում նույն հետևանքների ծնունդ տվեց: Թուրքական բանակը ստիպված եղավ նահանջել Բաքվից և Ադրբեջանը ենթարկվեց նախ անդիպիցների, ապա քոլշեմիկների հարձակմանը: Թուրքիան նույնպես, քայքի կենտրոնական Ամատոլիայից, գրեթե ամբողջությամբ նվաճվեց:

Այնպիսի մի խավար շրջանում, երբ տակավին չէին տարել մուսուլմանի հաղթանակն իսկ, Մուստաֆա Բեմալ փաշան զաղտնի հրամանագիր ուղարկեց Կարաբեղի փաշային, որպեսզի այն փոխանցի բոլոր թուրք մերկայացուցիչներին: Հրամանագիրը կրում էր 1920-ի դեկտեմբերի 1-ի թվականը:

Թուրքիայի ազգային արտաքին քաղաքականության համար այնքան կարևոր այս հրամանագրի չորս հողվածներից մեկը հետևյալն է.

«Կովկասի սահմանների և հարողրակցության տեսակետից բոլոր խնդիրները պետք է լուծվեն միշտ առաջնահերթ կարևորություն տալով Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի շահերին: Պետք է շահանք ոչնչացնել ուսմների և հայերի միջև 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված համաձայնության այն հողվածները, որոնք դեմ են Ադրբեջանի շահերին: Եթե ամեն կարգ իր ճակատագրի տեղը է, ուրեմն ամեն ինչ պիտի անենք, որպեսզի Դարաքաղի մեծ թրջաբնակ վայրերը կզվեն Ադրբեջանին»:

1921-ին Կարսի համաձայնության ընթացքում էլ որոշվեց, որ Նախիջևանը կզվի Ադրբեջանին: Այդ համաձայնությունը Խորհրդային Հայաստանի անունով ստորագրեցին արտաքին գործերի կոմիսար Ալեքանդր Մուսվաթը և մերքին գործերի կոմիսար Պոլոս Մակինցյանը:

Այս պատմական փաստաթղթերի լույսի տակ պետք է արժե-

ԹՈՒՐԻՔԻԱՆ ՏԵՍԱԿԵՏ

տրել հայերի այսօրվա ճգտումները: Հայերն ուզում են առնել Դարաքաղն ու Նախիջևանը: Մալարվածություն առաջադրեց Հայաստանի և Ադրբեջանի հարաբերություններում: Սփյուռքահայ լոքիները արշավանք սկսեցին Թուրքիայի և Ադրբեջանի դեմ: Լեւոն Տեր-Պետրոսյանի նախագահությանը կազմված Հայաստանի խորհրդարանը պատրաստվում է անվավեր հռչակել թուրք-հայկական սահմանները, որոնք վերոհիշյալ համաձայնությամբ ճշտված էին:

Ալեմայտ է, որ այն իրավունքները, որ հայերն ուզում են իրենց վերապահել Թուրքիայի հետ համագործակցելով հանդերձ, վնասում են թե Թուրքիայի, թե Նախիջևանի հարցի վրա Թուրքիայի ունեցած խոսքի իրավունքին:

Մինչդեռ Թուրքիան միշտ ցանկացել է ապահով լինել Կովկասի մեծ ուղղվարական կարևոր վայրից իր անվտանգության հարցում:

Մնում է, որ եթե Հայաստանի հետ առևտուր պիտի անենք ասելով անտեսներ մեր ազգի եղբայրներին, սրանք պիտի կարծեն, թե թուրքերը իրենց դաշունահարում են քիկունքից:

Թուրքիան երեք միլիոնանոց Հայաստանի հետ առևտուր անելու պատրվակի տակ չի կարող դավաճանել 70 միլիոնանոց թուրք հավաքականությանը:

Ուրեմն անպայման պետք է մերժենք Հայաստանի տնտեսական համագործակցության առաջարկը:

Այսպիսի առևտուրը կարող է մեզ համար շահ ապահովել: Այդ ձևով կպահպանվի հայերի համբուսյին կարծիքը և ոմանք մեր նկատմամբ կարող են մեղմանալ: Դրանից զատ, Սփյուռքը այսպիսի առևտուրի դեմ է: Թուրքիան Հայաստանի և Սփյուռքի այս տարակարծությունից կարող է օգտվել լոքիական շրջանակներում: Մակայն սրանք անպատեհությունների կողքին շատ քիչ առավելություններ են:

Թուրքիան հստակ կերպով պետք է հայտնի, որ մի շարք պայմաններ է դնում: Նա պետք է խուսափի Վոլքան Վուրալի Հայաստան ուղարկելով այնպիսի տպավորություն առաջացնելուց, թե մեծ ախորժակ ունի մեծ համագործակցության մեջ, ընդհակառակը պետք է սառը վերաբերմունք ցույց տա և սպասի, թե հայերը ինչպիսի նոր քայլեր կանեն:

Մեր պայմանները հետևյալները կարող են լինել.

1. Հայաստանի խորհրդարանը պետք է հայտարարի, թե ճանաչում է միջազգային համաձայնություններով ճշտված սահմանները, Հայաստանը պետք է հրաժարվի ուրեմն Թուրքիայից, Նախիջևանից, Դարաքաղից և Վրաստանից իր հողային պահանջներից, լուծարքի սահմանային հարցերի ընձույթյան հանձնախումբը, որի հայ զինյալ բանակը և ընդունի Հայաստանից վտարված ազերիներին:

2. Առավելագույն զիջողությամբ, որ Թուրքիան կարող է անել ցեղասպանության հարցում, հետևյալն է. առնվազն պետք է հայտարարվի, որ ցեղասպանության պնդումը պատմական-ակադեմիական խնդիր է. այսօրվա համար քաղաքական որեւէ նշանակություն չունի և այդ ուղղությամբ Թուրքիայի դեմ քարոզչություն չպիտի արվի:

Եթե Հայաստանն այս պայմանները չընդունի, այդ դեպքում Սփյուռքը, եթե կարող է, թող գա ու կշտացնի նրան:

Թուրքիան, որ 1920 թ. այնքան տկար լինելով հանդերձ, կարողացավ ազգային քաղաքականություն մշակել, հիմա շատ ասվելի է գորագույն և չի կարող դաշունահարել ազգերի թուրքերի և իր սեփական ապահովությունը:

ՊԱՏԵՐԱԶՍ ԵՒ...
ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԴԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Ամեն պատերազմ իր քերած դժբախտությունների և թշվառությունների հետ ոմանց առիթ է տալիս շահավետ գործառնությունների: Իհարկե, այդ առիթներից առաջին օգտվողները սովորաբար պետություններն ու զենքի մեծ և փոքր վաճառականներն են լինում, միջնորդները:

Այս տեսակետից բացառություն չի կազմում նաև Պարսից ծոցի պատերազմը, որ գերազանցապես լինելով մաֆիի համար մղվող պայքարի մի նոր օղակ, մեծ ապարեզ է բացել տարբեր մրցակցությունների և հետագա հաշվարկների համար: Աշխուժացել են նաև շինարարական մեծ ձեռնարկությունները, որոնք հաստատ գիտեն, որ պատերազմի ավարտին վերակառուցման գործից մեծ շահույթներ են ապահովելու:

Սակայն ամենից աշխույժ շուկան ռազմական տեխնիկային է պատկանում: Նույնիսկ այն պահին, երբ որևէ ռազմաօդային ու թարծրանում մահ ու ավեր սփռելու, առիթ է հանդիսանում հետագա շահաբեր գործառնությունների համար... Օդ թարծրացող լինի անգլիական «Տոմնադո», ֆրանսիական «Միլաժ», ամերիկյան «F-16», «B-52», «Մտիլս» կամ «Ճագուար» օդանավ, ռազմական կոնկրետ առաքելությունից բացի ունի նաև ինքնառեկամվելու նպատակ: Նրանցից յուրաքանչյուրի «հաջողությունը» կամ «ճախողությունը» հաշվի է առնվում պատվերների դասավորման մեջ:

Արդարև, «Ֆրանս-սյրես» լրատվական գործակալությունն ԱրուՊարից հաղորդում է, թե Վաշինգտոնն արդեն իսկ համոզել է Մոցի արաբական երկրներին, որ ձեռք բերեն իր արտադրած օդանավները: Այս պատերազմի ստանդարտ գործնականում ապացուցելով այդ «ապրանքների» առավելություններն օդում, ցամաքում թե ջրում: Իրեն համոզիչ փաստարկ նա առաջ է բաշել այն միտքը, թե պատերազմից հետո այդ երկրները ստիպված կլինեն համատեղ ռազմավորված անցկացնել ամերիկյան գործառնության հետ, եւ, հետևաբար, նախընտրելի է զինվել նոր տեսակներով...

Եւ արդեն ԱՄՆ-ին հաջողվել էր «Փոթորիկ անապատումից» դեռ շատ առաջ թարծրացնել տալ Մաուդյան Արաբիայի պաշտպանության քուլեներ 25 տոկոսով, Արաբական Միացյալ Էմիրություններին՝ 41 տոկոսով, իսկ Օմանին՝ 44 տոկոսով:


Մյուս կողմից, ԱՄՆ-ին հաջողվեց «կթել» նավթով կամ արդյունաբերությամբ հարուստ երկրներին: Այսպես, Զապոռիան պարտավորվել է 9 միլիարդ դոլլարի նոր հատուցում կատարել, որպես պատերազմին «չմասնակցելու տուրք», Բուվեյբը, մասնակցելով հանդերձ, վճարելու է եւս 13,5 միլիարդ, իսկ Մաուդյան Արաբիան՝ 14 միլիարդ:

Այս վերջինը, իր պատմության մեջ առաջին անգամ, անցյալ շաբաթ դիմեց արեւմտյան դրամատներին իրեն վարկ տալու, արդեն սպասած լինելով իր տրամադրելի գումարները:

Ցարոբինակ՝ բայց իրավ, մինչ Զապոռիան և Կերմանիան ստիպված են լինում «տուրք» վճարել պատերազմին չմասնակցելու նդպատակով, Իսրայելը, ընդհակառակը, ցարդ «գրպանել» է շուրջ 3,5 միլիարդ դոլլար՝ որպեսզի հանկարծ չներգրավվի կռիվների մեջ:

Իսկ թուրքիան, որ տրամապորտային մեծ օգնություն է ցույց տալիս դաշնակից ուժերին, առայժմ թավարարվում է ավելի համեստ վարձատրություններով, սակայն փաչիստում է պատերազմի ավարտին Մոսուլի կամ Կերկուքի նավթահորերից իր բաժինն ստանալու հույսեր:

Հ. Ա.



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

- «Գլխնուտ՝ հաշկական խաղողի համար» TASTE MAGAZINE
- «Ոգելից ըմպելիքների պերեստրոյկան՝ ՆՈՅԱԿԸ» BROADROOM MAGAZINE
- «Մրցակից կոնչակը ասպարեզ է կանչում Ֆրանսիականին» TAKE HOME DRINKS
- «Ով որ փորձի այն, համեղ անակընկալ է ապրելու» HARPERS & QUEEN
- «Ունի հրաշալի փափկություն եւ զգլխիչ, համալիր համ: Բույրը ավելի թանձր է քան Ֆրանսիականինը» HARPERS & QUEEN
- «25 տարեկանն ունի բույրը կարամելի, փաչտի, ծաղիկների եւ կաղինի, որ կգալի է դառնում քիմքի վրա, այն ըմպելը դարձնելով հրճվանք» BROADROOM MAGAZINE



11 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՊՐԱՆԻԿԸ ՄԻԱԺԱՍՏԱՆԱԿ ԴԱՏԱՆԻՆԵՐԻ

«Լուս Անջելես Քայմս» քերթում լույս տեսած մի հոդվածում կարդում ենք, որ 11 տարեկան Անդրանիկ Մալխասյանը նոյեմբերի 15-ին Լոս Անջելեսում անցկացված միաժամանակյա խաղի սեանսում հաղթել է 30 պատանիների, հաստատելով, ըստ իր մարզիչ Ռոբերտ Շնայդերի, աշխարհի ոչ պաշտոնական մրցանիչ։

Հայ պատանին, որ դասվում է 9-րդը ամերիկյան իր տարիքային խմբում և գործակիցների 1910 միավորով դասվում է Լահանգների շախմատիստների առաջին 15 տղայում, ընդհանրապես 2,5 ժամ ծախսեց մատ հայտարարելու համար իր թուր մրցակիցներին, որոնցից ոմանք մնացին ապշած։ Նա վեցերորդ դասարանից է, 3 տարի առաջ Հայաստանից Վեն Լայն (Լոս Անջելես) հաստատված մի ընտանիքի զավակ։ Առաջին անգամ այդ տաղանդը նկատել է նրա հորեղբայրը դեռևս Հայաստանում և նրան տվել ճատրակի ակումբ։

Քույս դեմքով ու սև մազերով պատանին, գրում է հոդվածագիր Սոնի Էֆրոնը, արդեն մեծավարի է պահում իրեն ճատրակի խաղատախտակի մոտ։ Լուրջ և ծանր տեսքով՝ ընդամենը վաղը կաններ է հատկացնում քայլ կատարելու համար։ Առաջիկա հուլիսին Անդրանիկը ամերիկացի երեք պատանիների հետ հրավիրած է մասնակցելու Լենինգրադում կայանալիք մրցումներին, որի համար նրանք այժմ ջանում են հավաքել 12 հազար դոլար՝ ճանապարհորդության

ծախսերը հոգալու համար։ «Ճատրակը հաճելի խաղ է, ասում է Անդրանիկը, զգլխիչ և մարտահրավերալից»։ Նա սիրում է նաև քասկետբոլ և ֆուտբոլ խաղալ, սակայն ամենից շատ ցանկանում է պրոֆեսիոնալ ճատրակորդ դառնալ։ Պարտավում է օրական երկու ժամ, իսկ շաբաթ օրերին՝ մինչև հինգ ժամ։

ՀՈՒՍԱՆԻ ԴԵՐԹԱՓՈՒՑ

«Գինանո» մարզական ընկերության հանրապետական խորհրդի ճատրակի քաջ առաջնության ոչ միայն աշխարհագրությունն էր մեծ, այլև կազմն էր զորեղ։ 14 մասնակիցներից մեկը միջազգային վարպետ էր, 8-ը՝ վարպետ և միայն հինգ վարպետության թեկնածու։ Վերջիններիս թվում հիմնականում պատանի ու երիտասարդ հեռանկարային ճատրակորդներ էին, որոնց հետ իրավագիտորեն կարելի է հույսեր կապել։ Նրանք լիովին արդարացին սպասելիքները։ Առաջին հինգ տեղ զբաղված ճատրակորդներից չորսը վարպետության թեկնածուներ էին։ Ընդ որում միանգամից երեքը լորացորին սպորտի վարպետի նորման։ Գա երեխան մեծախաղաչ Երևույթ է։ Միայն Անդրկովկասի և Հայաստանի քաղաքի չեմպիոն, միջազգային վարպետ Աշոտ Անաստասյանին հաջողվեց մրցակցի մատաղ սերունդին և երկրորդից չորրորդ տեղերը քաժանել վարպետության թեկնածուներ, Խորհրդային Միության պատանիների փոխչեմպիոն երեսանցի 16-ամյա Հովիկ Գանիելյանի և կիրովականցի Տիգրան Գյուլազյանի հետ։

Հատկապես գերազանց հանդես եկավ 23-ամյա երկրորդի վարպետության թեկնածու Արզեն Գեղամյանը, որը պարտություն չկրեց մրցաշարում, 13 հնարավորից վաստակեց 9 միավոր և ոչ միայն գրավեց առաջին տեղը, այլև գերակատարեց վարպետի

նորման, որը հավասար էր 8,5 միավորի։ Ծիշտ նույնպիսի արդյունքի հասան Հովիկ Գանիելյանն ու Տիգրան Գյուլազյանը, որոնց նույնպես կարելի է շնորհավորել վարպետի նորման լրացնելու առթիվ։ Ընդամենը կես միավոր չհերիքեց նման հաջողության հասնելու Երևանի նախկին չեմպիոն վարպետության թեկնածու Նորայր Քալանթարյանին, որը վաղուց խաղում է վարպետի ուժով։

Արձանագրված արդյունքները վկայում են, որ մեր հանրապետությունում հուսալի հերթափոխ է մեծանում, իսկ առողջ մրցակցությունը նպաստում է վարպետության զգալի աճին։

Ներկայիս չափանիշներով ես շատ ուշ եմ սկսել զբաղվել ճատրակով, - ասում է մրցաշարի գլխավոր դափնեկիրը Արզեն Գեղամյանը, - 11 տարեկան էի, երբ հրատարակեցի ճատրակով։ Ավելի լուրջ սկսեցի զբաղվել 9-րդ դասարանի վերջում։ Այդ ըն-

թացքում ես մեկ ու կես տարի մարզվեցի ճատրակի մեր ճահպան, միջազգային գրոսմայստեր Հենրիկ Գասպարյանի մոտ։ Հետո երկու տարի իմ մարզիչն էր Հայաստանի վաստակավոր մարզիչ Ռոբերտ Բունիաթյանը։ Այդ ժամանակ ես արդեն Հայաստանի հավաքականում էի, իսկ Բունիաթյանը ևս հավաքականի, ես իմ մարզիչն էր։ Հիմա համագործակցում եմ վարպետ Վաղիմիր Շարյանի հետ։

Ճատրակից քացի ուրիշ ինչ-որ էք զբաղվում։

Միայն ճատրակով։ Ինչպես ասում էր աշխարհի իններորդ չեմպիոն Տիգրան Պետրոսյանը, ճատրակն ինքնին տաժանակիր աշխատանք է և եթե ուզում ես լրջորեն զբաղվել դրանով, ապա համատեղության մասին խոսք լինել չի կարող։ Ես սովորում եմ համալսարանի երրորդ կուրսում, կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում, քայք տարկետում եմ վերջին և, հավանաբար, չշարու-

նակն ուսում, քանի որ արդեն ընտրություն եմ կատարել և պետք է ամբողջովին նվիրվեմ ճատրակին։

Ճատրակում ո՞վ է ձեր կուրքը, ո՞ւմ եք ուզում ճանաչվել։

Իմ կուրքը եղել է մնում է աշխարհի 11-րդ չեմպիոն Ռոբերտ Ֆիշերը։ Ես ունեմ Ֆիշերի մասին հարստվածագի, հանրահայտ ճատրակային լրագրող Բելիցայի գլխից, որտեղ կան Ֆիշերի թուր պարտիաները։ Ես կանված ուսումնասիրում եմ այդ պարտիաները։

Իսկ առաջիկայում ի՞նչ ծրագրեր ունեք։

Փետրվարի 22-ին մեկնելու եմ Ֆրանսիա մասնակցելու Փարիզի քաջ առաջնությանը։ Ինձ հետ կլինեն Արմեն Համբարձումյանը, Վաղիմիր Շարյանը, Կարեն Մովսիսյանը, Նորայր Քալանթարյանը և Ավետիս Ավետիսյանը։

Դե ինչ, մնում է հաջողություն մտադրել։

N:	Կարգ	Մասնակիցներ	Բաղաժ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	Մ.	Տ.
1	ս/վ	Մուրմուրով	Մվերդև	0	0	1/2	0	0	1/2	1/2	0	1/2	0	1/2	1/2	0	3	14	
2	վ/թ	Դանիելյան	Երևան	1	1/2	1/2	1	0	1/2	1	1	1/2	1	1/2	1/2	1/2	8.5	2-4	
3	վ/թ	Գեղամյան	Երվաթյ	1	1/2	1/2	1/2	1/2	1	1/2	1/2	1/2	1	1	1	1	9	1	
4	ճ/վ	Անաստասյան	Երևան	1/2	1/2	1/2	1/2	1/2	1	0	1	1/2	1	1	1	1/2	8.5	2-4	
5	վ/թ	Գյուլազյան	Կ-Պլան	1	0	1/2	1/2	1/2	1	1/2	1	1/2	1/2	1/2	1	1	8.5	2-4	
6	վ/թ	Քալանթարյան	Երևան	1	1	1/2	1/2	1/2	1/2	1	1/2	1/2	1/2	0	1/2	1	8	5	
7	ս/վ	Համբարձումյան	Երևան	1/2	1/2	0	0	0	1/2	1	1/2	1/2	1/2	0	1/2	1/2	5	11-13	
8	վ/թ	Նալբանդյան	Երևան	1/2	0	1/2	1	1/2	0	0	1	1	0	0	0	1/2	5	11-13	
9	ս/վ	Իվանով	Մոսկվա	1	0	1/2	0	0	1/2	1/2	0	1/2	1/2	1/2	1/2	1/2	5	11-13	
10	ս/վ	Բախտուրով	Քրիլյուխի	1/2	1/2	1/2	1/2	1/2	1/2	0	1/2	1/2	0	1/2	1	1/2	6	8	
11	ս/վ	Քալանթարյան	Երևան	1	0	1/2	0	1/2	1/2	1	1/2	1	1/2	1/2	1/2	1/2	7	6	
12	ս/վ	Մովսիսյան	Երևան	1/2	1/2	0	0	1/2	1	1	1	1/2	1/2	1/2	1/2	0	1/2	6.5	7
13	ս/վ	Շարյան	Երևան	1/2	1/2	0	0	0	1/2	1/2	1	1/2	0	1/2	1	1/2	5.5	9-10	
14	ս/վ	Լուրմազյան	Քիշինյե	1	1/2	0	1/2	0	0	1/2	1/2	1/2	1/2	1/2	1/2	1/2	5.5	9-10	

ՆԱԿԱՆՁԸ ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Բասկետբոլի կանանց ԽՍՀՄ քարճագույն խմբի 58-րդ առաջնությունում Արուսյանի «Հատիս» 7-րդ անընդմեջ պարտություն կրեց։ Ընդ որում 3-րդը սեփական հարկի տակ։ Քիմը ուժեղագույնների մրցաշարում հանդես գալու տարիներին երբեք այսպիսի ճգնաժամ չի ապրել։ Այս անգամ «Հատիսը» 52:68 հաշվով գլջեց Ռիգայի Տրանվայ Տրուկչրուսի Տրեստի քիմին, որին առաջին շրջանում Ռիգայում հաղթել էր 80:79 հաշվով։

Իհարկե, կարելի է ի պաշտպանություն «Հատիսի» քաղաքի վաստակները բերել, ասենք այն, որ խաղացանքը դիմալի չէ, որ մարզադահլիճը, որ կայանում են երեսանյան խաղերը, հեռու է քաղաքից լինելուց, որ քաղաքում է քիմի «շարժիչը» կուրով

Քոչարյանը, որ Անահիտ Սարգսյանը գրեթե 10 օր չի մարզվել, որ Անահիտ Հակոբյանը ծնկային հոդու վնասվածքի պատճառով ստիպված է խաղալ մեկ ոտքով և այլն, սակայն ճշմարտությունը մեկն է. «Հատիսի» պահեստայինների նստարանը շատ կարճ է։ Ամենեւին պետք չէ խոշոր մասնագետ լինել նման եզրակացության հանգելու համար, քանի որ հանդիպումների սցենարները նույնությամբ կրկնվում են։ Երբ «Հատիսի» առաջատարները դեռ թարմ են, խաղահրապարակում հավասար պայքար է ընթանում, քայք երբ նրանք հոգնում են, այլևս արժանի փոխարինող չի լինում և կարճ ժամանակահատվածում անեն ինչ տակնուվրա է լինում։ Այդպես էր նաև SSS-ի հետ հանդիպման ժամանակ։ Առաջին կեսը մեր քիմը նույնիսկ շահեց 26:24 հաշվով, իսկ 2-րդում «Հատիսի» հոգնատանը վերադարձվեց, մասնավորապես կետերում։

Կետերում Մաղիկյանը, Անահիտ Սարգսյանը, որոնք ինչքան էլ անձնագրի ու ետանդում են գործում, միևնույն է՝ անընդհատ

գտնվելով խաղահրապարակում, ֆիզիկապես ի վիճակի չեն դիմանալու գերբեռնվածությանը։ Բացի այդ, ստանալով տուգանքներ, նրանք ստիպված են չափից ավելի զգուշավոր խաղալ պաշտպանությունում, այստեղից էլ ծնվում է ծախողությունը։ Անչափ մոտ կանգնած լինելով քիմին, ճշմարիտն ասած, խղճիս դեմ եմ համարում ըննադատական խոսք ասելը։ Չպետք է մոռանալ, որ «Հատիսի» մինչև հիմա ձեռք բերված հաջողությունները պայմանավորված են նրա մարզիչների և առանձին խաղացողների խանդավառությամբ, որ քիմը կտրված է արմատներից։ Այնուամենայնիվ պահանջներ կարելի է ներկայացնել։ «Հատիսի» երիտասարդ խաղացողները վարպետության տեսակետից դանդաղ են աճում։ Օրինակ SSS-ի հիմնական կազմում տոն են տալիս 4 խաղացողներ, որոնք ընդամենը 18 տարեկան են։ Իսկ «Հատիսում», չէ՞ որ Մաղիկյանը, Սարգսյանը, Քոչարյանը, Տրոյրոշչենկոն, Բուզմակովան արդեն 30-ն անց են։ Ինչպիսի՞ ջանադրությամբ ու նվիրվածությամբ էին գործում Մաղիկյանն ու Սարգսյանը, ուժերի ամենավերջին լարվածությամբ։ Ես չնայած հյուրերն ամուր պցանների մեջ կն առել «Հատիսի» ավագին, այնուամենայնիվ Մաղիկյանը, հավատարիմ մնալով իր հարձակողական ոճին, կրկին ամենաարդյունավետն էր։ Նա իր քիմին բերեց 27 միավոր, սակայն դա էլ չօգնեց։

Ինչեւ, «Հատիսը» շարունակում է մահաճը։ Լավ իմանալով մեր քիմի մարտական քնավորությունը, կարելի է սպասել, որ դեռ ամեն ինչ կորած չէ և հնարավոր է պայքարել ուժեղագույն ութնյակ մտնելու համար։

Վերջերս լատվիական քիմերը որոշել էին հրաժարվել ԽՍՀՄ առաջնություններից։ Երբ այդ մասին

գրուցում էի SSS-ի գլխավոր մարզիչ, լատվիական հանրապետության վաստակավոր մարզիչ Սուրբախյանի հետ, նա ասաց, որ իրոք նման մտադրություն կա և ուզում են փոխարենը 6 հասնապետությունների՝ Լիովայի, Լատվիայի, Էստոնիայի, Մոլդովայի, Վրաստանի և Հայաստանի քիմերի մասնակցությամբ անցկացնել «Անկախության գավաթ» անունը կրող մրցաշար։

Դա, իհարկե, ցանկություն է, իսկ թե ինչ է լինելու ապագայում, ոչ ոք չի կարող երաշխավորել։ Առաջիկա չորս հանդիպումները «Հատիս» անցկացնելու է դրանում։ Մասնավորապես այսօր Ալմա-Աթայում հյուրընկալվելու է «Բուրեվեստինին»։

Անա ԽՍՀՄ 58-րդ առաջնությունում «ՀԱՍՄ»-ի մնացած հանդիպումների խաղացանքը.

փետրվար	20-ին Բուրեվեստինի - Հատիս
23-ին Մոլդովա - Հատիս	
27-ին Գորիզոնտ - Հատիս	

մարտ

2-ին ԲԿՄՍ - Հատիս
5-ին Հատիս - Գինանո (Ն)
10-ին Հատիս - Սպարտակ(Մ.ճ.)
18-ին Հատիս - Մոլդովա
23-ին Հատիս - Էլեկտրոսիլա
28-ին Հատիս - Գինանո (Վ)


ԱՐՁՈՒՄԱԿ

Բասկետբոլի կանանց ԽՍՀՄ քարճագույն խմբի 58-րդ առաջնության (փետրվարի 20-ի դրությամբ)

1. Գինանո (Կ)	14	14	0	28
2. Բուրեվեստինի	15	6	9	21
3. ԲԿՄՍ	11	7	4	18
4. Գորիզոնտ	12	6	6	18
5. Սպարտակ	13	5	8	18
6. Մոլդովա	13	5	8	18
7. Էլեկտրոսիլա	10	7	3	17
8. Հատիս	13	4	9	17
9. Գինանո (Վ)	10	6	4	16
10. SSS	10	5	5	15
11. Մոլդովա	8	3	5	11
12. Գինանո (Ն)	10	1	9	11



Մաք Չորդանը օդային հաղորդակցության միակ հուսալի միջոցն է



ԽՆԴԻՐ

ՄԱՏ ՎԵՃ ՔԱՆՈՆ

Էջը վարում է մարզական մեկնարան ՍՈՒՐԵՆ ԲԱՂՎԱՍՏԱՆԸ

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊՐԵՍԻԵՐ ՄԻՆԻՍՏՐ ՋՈՆ ՄԵՅՅՈՐԻ ԼԱՍՏԱԿԸ ԷՂԳԱՐ ՍԱՎԻՍԱՍՐԻՆ

Բրիտանական պրեմիեր մինիստրը Նա Մեյնը Է հղել է Լատինալի վարչապետին, որով հույս է հայտնել, թե շուտով Լատինիան և մերձբալթյան մյուս պետությունները կդառնան երոպական անվտանգության և համագործակցության խորհրդի փոխակ անդամներ: Նա հայտնել է, որ բալթյան վերջին դեպքերը տհաճ անակնկալ էին իր համար: Խորհրդային իշխանությունների կողմից ուժի գործադրումը անընդունելի է և ոչ մի կերպ չի համընկնում Փարիզի համաձայնագրի և երոպական անվտանգության ու համագործակցության խորհրդի այլ փաստաթղթերի հետ, - շարունակել է նա: Այդ մասին պրեմիեր-մինիստրը տեղյակ է պահել խորհրդային իշխանությունների և ընդգծել, որ ստիպված պիտի լինեն վերանայել այն օգնությունը, որ ցուցաբերում են Խորհրդային Միության նկատմամբ երոպական համագործակցության երկրները: Նրանք որոշել են կանգնեցնել օգնության մի մասը, որի մասին պայմանավորվել էին անցյալ դեկտեմբերին, ի պատասխան մերձբալթյան դեպքերի: Բալթյան խնդիրը չի կարելի լուծել ուժի կիրառմամբ: Խորհրդային իշխանությունները պարտավոր են պահել իրենց խոստումը, որ թիտոն է Փարիզի համաձայնագրից և Հելսինկի փաստաթղթերից: Մենք կոչ ենք անում Խորհրդային Միությանը ձեռնպահ մնալ հետագա ճնշման մեթոդներից և լուրջ քանակություններ սկսել քաղաքական հանրապետությունների օրինական իշխանությունների հետ: Պրեմիեր մինիստրը միաժամանակ նշել է, թե բալթյան հանրապետությունները պարտավոր են հաշվի առնել ազգային փոքրամասնությունների իրավունքները և այդ առթիվ՝ Խորհրդային Միության արդարացի անհանգստությունը: Միայն քանակություններով Մոսկվան ու հանրապետությունները կարող են լուծել իրենց խնդիրները, ավարտել է Ջոն Մեյնը:

գլխավոր տնօրեն ժուրիի Նուրմեն: Լատինիայում առաջին ոստիկանական դպրոցը բացվել է 1925 թ.: Դպրոցի վերաբացումը որոշվեց 1990 թ. մայիսի 15-ին, երբ կայսրապահ ուժերը ներխուժեցին Տոնավեա պալատի բակը: Սեպտեմբերին արդեն 109 երիտասարդներ սկսեցին պարապմունքները: Լատինական ոստիկանությունը ծառայությունն սկսում է մարտի 4-ից: Ամենամուսու հաշվարկներով ոստիկանությունում կզգացվի երկու հազար հոգու պակաս:

տոնական հանրապետության պրեզիդենտ Անուրդ Ռյուտեյի հետ: Ժամանցման նպատակն էր ընճարկել քաղաքական հանրապետություններին օգնություն ցույց տալու հարցը: Կողմերը պայմանավորվեցին, որ Դանիայի դիտորդները կմասնակցեն մարտի 3-ի հանրաքվեին:

«ՄՈՍԿՎԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ

Մոսխորհրդի գործկոմը որոշում է ընդունել՝ ստուգել և արգելել մաշտաբաղաջից դուրս տարվող ժողովրդական սպանման գրեթե բոլոր տեսակի ապրանքները:

Կրթության պետական կոմիտեի նախագահ Գ. Ճագոդինը վերջերս կապեց մամուլ ասուխտում հայտնել է, որ երկրի բուհերում վերացվում է հասարակագիտություն առարկայի ըննությունները, իսկ նախապատրաստական բաժանմունքների շրջանավարտները բուհեր կընդունվեն դիմորդների

քը, որ քնության փրկության համար մղվող պայքարում պետք է միավորվեն համաշխարհային բոլոր կրոնների ներկայացուցիչները, որպեսզի իրագործվի քնության փրկության գաղափարը:

Վաղիվոստոսի քաղաքի միջազգային եվանգելիստիկ հաստնել է, որ քաղաքային իշխանությունները ստացել են ԽՍՀՄ գինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ-գնդապետ Վաղիմիր Գեմիտովի նամակը, պաշտոնապես թույլատրելի՝ Վաղիվոստոսը հաստարարել քաղաքը:

Չեչեն-Ինգուշթիայի շաքարի գործարանի տնօրեն Ա. Ամալինն առաջինն է հանրապետությունում պաշտոնական գործավարության մեջ օգտագործել չեչենները: Նրա տված նոր հրամանագրում ասվում է, «Հաշվի առնելով չեչեն ժողովրդի համագրային համագումարի հանձնարարությունը և աշխատավորական անձնակազմի որոշումը, ինչպես նաև ապահովելու համար քաղաքացիների խղճի ազատությունը (ուրբաթ օրվա աղոթքը մզկիթում)՝ ուրբաթ օրը համարել հանգստյան օր, իսկ կիրակին՝ աշխատանքային: Առայժմ գործարանի տնօրենի այս տրոփինակ որոշումը հանրապետությունում հետետրոցներ չի գտել:

Լատինիայում նախատեսվում է գործածել այսպես կոչված «սպիտակ դրամները»՝ ուկրաինական կուպոնի (կտրոնի) համանմանակը: Այդ մասին հաղորդել է լատինական հանրապետության վարչապետի խորհրդատու Գեորգի Դրագիլեյը: Նախնական հաշվումների համաձայն դա տեղի կունենա ապրիլին: Հետագայում հնարավոր է, որ «սպիտակ դրամները» կդառնան դրամական նոր միավոր:

Համաձայնեցնելով պետական հեռուստատեսությանը և անգլիական «Բալտասար ֆիլմս» հեռուստաընկերությունը 1943-1945 թթ. Տամբուլի մոտ գտնվող զինգերիների մասին համատեղ վավերագրական շարժանկար նկարահանելու համաձայնագիր են կնքել: Այդ գերիները պատերազմի ժամանակ կռվել են գերմանական բանակում և գեներալ Դե Գոլի կոչով հանձնվել են կարմիր բանակին: Մինչև այսօր նրանց մասին ոչինչ չի հաղորդվել: Գերմանի և կենդանի վկաներ՝ նախկին ճամբարի պետը, զինգերիներ, որոնք մինչև այժմ ապրում են ԽՍՀՄ-ում:

ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Փետրվարի 12-ին Լատինական արհմիությունների կենտրոնական խորհրդի նախագահ Միլի Կալլասը և վարչապետ Էդգար Սավիտարը կնքեցին 1991 թ. սոցիալական երաշխիքների համատեղ պայմանագիր: Այն տրատեսակ նախադեպ է, որ հիմք է տալիս արտադրական կազմակերպությունների, ընդհուպ մինչև առանձին ձեռնարկությունները, և արհմիությունների միջև հետագա պայմանագրերի: Նման պայմանագիր մինչև այսօր չի կնքվել ոչ Լատինիայում, ոչ էլ Արևելյան Երոպայի որևէ երկրում:


ԲԱԼԹԻՎԱՅՈՒՆ ՀԱՆԳԻՍ Է

Փետրվարի 15-ին երոպական համագործակցության երկրների ներկայացուցիչները եղան Մոսկվայում, այնուհետև այցելեցին Լատվիա, Լիտվա և Լատինիա: Սոցիալ-դեմոկրատ պրն. Մարտինսը դրությունը Լատինիայում քննադարձեց, որպես ամենահանգիստը Բալթիկայում: Նա ավելացրեց նաև, որ լավատեսորեն է տրամադրված քարեկանական հանդիպումների առիթով՝ Մոսկվայում և Տալլինում: Նա ասաց, որ ոչ ոք կասկածի տակ չի դնում Խորհրդային Միության ներկա կարգավիճակը եվրոպական համագործակցությունում:

Փետրվարի 17-ին հանդիպում եղավ Գերագույն խորհրդի նախագահ Անուրդ Ռյուտեյի հետ:

ԱՄՆ-Ի ՍՈՍՉԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԼԹԻՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Տալլինն ժամանեց ԱՄՆ-ի պրեզիդենտի օգնական Ուիլյամ



Ճարտանկարը՝ «ԴԱԳՐԱՐՆԵՐ»-ի

Ուիլյամ, որը հանդիպում ունեցավ Լատինական հանրապետության առողջապահության նախարար Անդե Էլլամայի հետ: Ուիլյամ հանձնեց քվեական սարքավորումների և դեղորայքների ցուցակ, որոնք կուղարկվեն: Մերձալիկա մինչև փետրվարի 28-ը: Այնուհետև պրեզիդենտի օգնականը Տալլինից մեկնեց Ռիգա:

ՏԱԼԻՆ
19 փետրվար 1991
մեր սեփական թղթակից
ԳԱՑԱՆԵ ԱՅՐԻՎԱՆ

հետ հավասար հիմունքներով:

ԽՍՀՄ դատախազությունը հայտնել է, որ շրջակա միջավայրի դեմ կատարվող հանցագործությունների թիվը 1990-ին հասել է 26 հազարի: Դրանց միայն ուղիղ վնասը կազմում է 24 մլն. ռուբլի:

Լույս է տեսել «Էկո-Ինտեր» (Էկոլոգիական ինտերնացիոնալ) թերթի առաջին համարը: Թերթի նշանաբանն է. «Միություն՝ փրկության համար»: Թերթը, որի գլխավոր խմբագիրը Վալենտին Նիկիտինն է, հաստատում է այն միտ-

ՈՍՏԻՎԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՅԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Փետրվարի 16-ին Լատինիայի ներքին գործերի նախարարության ոստիկանական դպրոցի առաջին ավարտական էր: Դպրոցը գերմանիայում է Պալտկուտում, Պլատնուց ոչ հեռու: Հանդիսավոր հավաքում ելույթ ունեցան վարչապետ Է. Սավիտարը, ներքին գործերի նախարար Օլե Լանայարվը և ոստիկանական դեպարտամենտի

ԴԱՆԻԱՅԻ ՊՈՒԼՍԱՄԵՆՏԱԿԱՆՆԵՐԸ ԷՍՈՆԻԱՅՈՒՆ

Փետրվարի 13-ին երկկույան Տալլինն ժամանեց Դանիայի պառլամենտական պատգամավորու թյունը՝ պառլամենտի պրեզիդենտ Հանս Պետեր Կաուսենի գլխավորությամբ: Նրանք հանդիպեցին Լատինիայի նախարարությանը:

«ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆԱՎՈՐՆԵՐԻ ՎԵՐԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Համաձայն ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի որոշման «սահմանադրական իրավունքների ավելի գործուն իրագործման նպատակով» կետի՝ Գերագույն Խորհրդի նախագահությունը, փոխպրեզիդենտը և վարչապետը այժմ իրավունք ունեն ստանալ 3 հազար ռուբլի ամսական աշխատավարձ, մերձմուսկովյան պետական ամառանոց, մեքենա և օդանավ: Թոշակի անցնելու դեպքում նրանց տրվում է 1200 ռուբլի թոշակ, կցվում է պետամառանոց և մարդատար մեքենա: ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի հատուկ որոշմամբ այդ ամենը տրվել է նաև արդեն

միութենական կարգի անհատական թոշակառու Ն. Ի. Ռիժկովին:

ԲՈՐԻՍ ՊՈՒԳՈՅԻ ՄԱՍԼՈՒՍՈՒԼԻՍԸ

ՄՈՍԿՎԱ, 19 փետրվար 1991
Մեր հատուկ թղթակից
ՀԱՎՈՐ ԱՍՍՏՐՅԱՆ

Փետրվարի 19-ին ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության շենքում անցկացվեց Բորիս Պուգոյի մամուլ ասուխտը: Մեր այն հարցին, թե նախարարն ինչպես է գնահատում Հայաստանում տիրող իրավիճակը, նա պատասխանեց. «Չեմ հանրապետությունում իրադրությունը համեմատաբար կայուն

է: Վերջին ամիսներին ոչ մի խոշոր դեպք չի արձանագրվել, թեև հանցագործությունների արժեքը Հայաստանը Միությունում գրավում է առաջին տեղը: Վերջին տվյալների համաձայն անը կազմում է 45 տոկոս: Սակայն պետք է նշել, որ հանցագործությունների մակարդակը Հայաստանն, իհարկե, զիջում է մյուս միութենական հանրապետություններին: Ընդհանուր առմամբ մենք գոհ ենք Հայաստանի ներքին գործերի նախարարության աշխատանքներից:

Նախարարության պատրաստած հատուկ փաստաթղթերից տեղեկացրեց, որ 1990 թվականին Հայաստանում արձանագրվել է 12110 հանցագործություն, այդ թվում 251-ը՝ ծանր: Տնտեսության մեջ դրանց դեմ տարվող պայքարի ակտիվությունը ըստ քաջահայտ-

ված հանցագործությունների թվի կազմում է 0,5 տոկոս:

Այնուհետև, նախարար Պուգոն նշեց, որ իր կարծիքով լայն հնարավորություններ պետք է տրվեն ինքնիշխան հանրապետություններին, քանզի նրանք են նախնառաջ դրությունը տնօրինողները: Ինչ վերաբերում է ներքին գործերի և պաշտպանության նախարարությունների համատեղ պահանջարկին, ապա պետք է ասել, որ առայժմ արդյունքներն այնքան էլ գոհացուցիչ չեն: Նման համատեղ հսկումներ կատարվում են Միության 484 քաղաքներում:

Նախարարը հակիրճ պատասխանեց նաև լատվիական «Դիեմա» թերթի թղթակցի այն հարցին, թե ինչ օրինական հիմունքներով են ներքին գործերի նախարարության ստորաբաժանումները գրավել Ռիգայի մամուլի տունը: Նա

պատճառաբանեց, որ ԽՄԿ-ին պատկանող շենքը Լատվիայի կոմկուսի թնդրանցով է վերցվել պաշտպանության և այժմ «միջոցներ են ձեռնարկվում» կրճատել զինվորների թիվը: Պուգոն նշեց նաև, որ իր կարծիքով միլիցիան չպետք է խառնվի «քաղաքական խաղերին»:

Նախարարը քաջասական պատասխան տվեց այն հարցին, թե Բ. Ելցինի՝ ռուսական միլիցիայի ստորաբաժանումները կազմելու ծրագիրը որքանով է իրական: Նա նշեց, որ մնան միջոցառումները՝ հատկապես միլիցիայի բաժանումը, անցանկալի հետեւանքներ կունենա: Պուգոն հայտարարեց, որ միլիցիան անբաժանելի է: Նա կոչ արեց, որպեսզի մամուլի ներկայացուցիչներն օգնեն ներքին գործերի նախարարությանը: